




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ



ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 2014թ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԿԻՃԱԿԻ ԵՎ ՄԱՐԶՊԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎ ԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐԻ - 2015թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնակչությունը	-	251 941 մարդ,
Համայնքների թիվը	-	119, որից`
3-ը` քաղաքային,	146 908 բնակչությամբ	(58.3%),
116-ը` գյուղական,	105 033 բնակչությամբ	(41,7%):

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

2014 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում արձանագրվել են հանցագործության 1065 դեպքեր (2013 թվականին` 1125 դեպք), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը նվազել են 60-ով, կամ 5.3%-ով:

Նշված 1065 դեպքերից 946-ը բացահայտման տոկոսում հաշվվող դեպքեր են, նախորդ տարվա 939-ի դիմաց:

1065 դեպքերից բացահայտվել են 901-ը, չի բացահայտվել 164-ը, բացահայտումը կազմում է 84.6%, նախորդ տարվա 90.0%-ի դիմաց (ՀՀ միջին 79.9%):

Հանցագործություններից`

- **միջին ծանրության** - արձանագրվել են 224 դեպքեր (2013 թվականին` 209 դեպք), չի բացահայտվել 42-ը, բացահայտումը 81.3%, նախորդ տարվա 79.9%-ի դիմաց (ՀՀ միջին 74.5%):
- **ծանր** - արձանագրվել են 162 դեպքեր (2013 թվականին` 109 դեպք), չի բացահայտվել 81-ը, բացահայտումը 50.0%, նախորդ տարվա 62.4%-ի դիմաց (ՀՀ միջին 54.8%):
- **առանձնապես ծանր** - արձանագրվել են 15 դեպքեր (2013 թվականին` 8 դեպք), չի բացահայտվել 2-ը, բացահայտումը 86.7%, նախորդ տարվա 87.5%-ի դիմաց (ՀՀ միջին 86.1%):

2014 թվականի ընթացքում մարզում արձանագրվել են արտակարգ իրավիճակների 543 դեպքեր (2013 թվականի նույն ժամանակահատվածում 561 դեպք), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը նվազել են 3.2%-ով.

այդ թվում`

տարերային բնույթի` 24 դեպք (2013 թվականի նույն ժամանակահատվածում` 85 դեպք), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը նվազել են 71.7%-ով.

տեխնաձին բնույթի` 387 դեպք (2013 թվականի նույն ժամանակահատվածում` 357 դեպք), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերն աճել են 8.4%-ով.

2014թ. ընթացքում արտակարգ իրավիճակներից մարզին հասցված նյութական վնասը կազմել է՝ 3 մլրդ. 446 մլն. 413 հազ. 832 դրամ (2013 թվականի նույն ժամանակահատվածում - 530 մլն. 104 հազ. 778 դրամ): Նյութական վնասը աճել է 550.1%-ով կամ 2 մլրդ. 916 մլն. 309 հազ. 054 դրամով:

Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների պատճառած նյութական վնասը կազմել է՝ 86 մլն. 841 հազ. դրամ (2013 թվականի նույն ժամանակահատվածում- 43 մլն. 104 հազ. 778 դրամ): Նյութական վնասը աճել է 101.5%-ով կամ 43 մլն. 736 հազ. 222 դրամով:

Տարերային բնույթի արտակարգ իրավիճակների պատճառած նյութական վնասը կազմել է՝ -կարկտահարություն՝ տուժել է 57 համայնք, վնասվել է 12652.7 հա գյուղ մշակաբույսեր՝ - 3մլրդ. 359մլն. 572 հազ. 336դրամ (2013 թվականի նույն ժամանակահատվածում- 487 մլն. դրամ, տուժել է թվով 8 համայնք, վնասվել է 2107 հա. գյուղ. մշակաբույսեր): Նյութական վնասն աճել է 589.8%-ով, կամ 2 մլրդ. 872 մլն. 572 հազ. 336 դրամ:

Նախապատրաստվել և անցկացվել են մարզի խորհրդի 4 հերթական նիստեր, որոնցում քննարկվել են համայնքների 2014 թվականի բյուջեների սեփական եկամուտների կատարման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, ոռոգման համակարգերի նախապատրաստության, համայնքներում գնումների կազմակերպման գործընթացի, հուշարձանների պահպանության վիճակի ու առկա խնդիրների, գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների, <<Արփի լիճ>> ազգային պարկի տնտեսական ու արգելոցային գոտիներում հողերի վարձակալության գործընթացի կանոնակարգման և այլ հարցեր:

2014 թվականի ընթացքում օրենքով սահմանված կարգով մարզի թվով 19 համայնքներում նախապատրաստվել ու անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, այդ թվում 11 համայնքներում՝ համայնքների ղեկավարների, 8 համայնքներում՝ ավագանու անդամների: Բավրայի, Յոդամարգի և Ալվարի համայնքներում ընտրվել են համայնքների նոր ղեկավարներ:

2014 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, 2014 թվականին նախատեսված թվով 39 համայնքներից նույնքանում իրականացվել է վարչական հսկողություն:

2014 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզպետարանում ստացվել է համայնքների ավագանիների թվով 1268 որոշումներ:

Համայնքների ավագանիների թվով 840 որոշումներ համապատասխանել են ՀՀ օրենսդրությանը, իսկ թվով 428 ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են համապատասխան առարկություններ (տեսակարար կշիռը՝ 33.7%) և համապատասխան առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին:

Ամենօրյա աշխատանք է տարվել համայնքների ղեկավարների աշխատակազմերի կադրային գործի բարելավման և համայնքային ծառայության ներդրման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մարզի համայնքներում առկա 632 համայնքային ծառայության պաշտոններից զբաղեցված են 518-ը: Թափուր մնացած 114 պաշտոններից 54-ը զբաղեցված է ժամկետային աշխատանքային պայմանագրերով: Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների հայտարարությունները տեղադրվել են <<Ազդարար>>, ՀՀ տարածքային կառավարման նախարարության և մարզպետարանի ինտերնետային կայք էջերում, դրանք փակցվել են նաև համապատասխան համայնքապետարանների տեղեկատվական ցուցատախտակներում: Մարզի 40 համայնքներում նախապատրաստվել և անցկացվել են

համայնքային ծառայության թափուր պաշտոնների 89 մրցույթներ, իսկ 115 համայնքներում՝ համայնքային ծառայողների 154 ատեստավորումներ: Մրցույթների ու ատեստավորումների արդյունքները սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման օրվա կապակցությամբ կայացած մրցանակաբաշխությունում Ախուրյանի համայնքը ճանաչվել է «Լավագույն գյուղական համայնք 2014», Արթիկի համայնքը՝ «Լավագույն մշակութային համայնք 2014», իսկ Գյումրու համայնքը՝ «Տարվա լավագույն համայնքային կայք»:

Աշխատանքներ են տարվել մարզի համայնքների ղեկավարների հետ՝ 2013 թվականի ձմեռային, 2014 թվականի ամառային և ձմեռային գորակոչերի ընթացքում տարածքային զինվորական կոմիսարիատներին աջակցություն ցուցաբերելու, գորակոչային տարիքի անձանց հաշվառումը պատշաճ կազմակերպելու, հաշվառումից դուրս մնացած անձանց բացահայտելու և զինվորական կոմիսարիատներին համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու ուղղությամբ:

2013 թվականի ձմեռային և 2014 թվականի ամառային գորակոչի առաջադրանքները կատարվել են համապատասխանաբար 106.4% և 101.5%:

2014 թվականի հունիսի 17-ին ՀՀ Շիրակի մարզում անցկացված գորահավաքային նախապատրաստության միջոցառումների ժամանակ ռեսուրսների ծանուցումն ու գորահավաքային պլանի համաձայն զինվորական կոմիսարիատների նախնական հավաքակետեր առաքումն իրականացնելու նպատակով Ախուրյանի, Արթիկի և Անիի զինվորական կոմիսարիատներին ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն:

ԼՂՀ ՊԲ և ՀՀ ՊՆ 5-րդ, 3-րդ, 1-ին բանակային կորպուսներիի նախաձեռնությամբ սույն թվականի մարտի 16-ին, հունիսի 21-ին, հոկտեմբերի 14-ին, նոյեմբերի 20-ին Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում ՀՀ Շիրակի մարզից գորակոչված թվով 262 զինծառայողների և նրանց ծնողների հանդիպումն ապահովվելու ուղղությամբ իրականացվել են անհրաժեշտ աշխատանքներ:

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել ՀՀ Շիրակի մարզի սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ու ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությունների և սահմանապահ ուժերի միջև համագործակցված աշխատանքների ապահովման ուղղությամբ:

Հանրային իրազեկման նպատակով ապահովվել է ՋԼՄ-ների մասնակցությունը մարզպետարանի աշխատակազմի կողմից կազմակերպված միջոցառումներին, մարզի խորհրդի նիստին, տրամադրելով նրանց անհրաժեշտ տեղեկատվություն:

Մարզպետարանի կայքէջում մշտապես տեղադրվել է տեղեկատվություն և պարբերաբար կատարվել համապատասխան փոփոխություններ, տեղադրվել են մարզպետի որոշումները, կազադրությունները, ինչպես նաև համայնքների ղեկավարների ու ավագանիների որոշումները:

Մարզխորհրդի նիստերի օրակարգը նախապես տեղադրվել են մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքէջում, նիստերին մասնակցելու համար մշտապես տեղեկացվել են մարզում գործող, ինչպես նաև հանրապետական լրատվամիջոցների բոլոր ներկայացուցիչները:

ՀՀ Շիրակի մարզպետը աշխատանքային և ճանաչողական հանդիպումներ է ունեցել ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասի հետ, Ասիական զարգացման բանկի կողմից ՀՀ-ում իրականացվող ծրագրի ներկայացուցիչ Սեզար Լոուրենսի հետ, «Հայջրմուղկոյուղի» ընկերության գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենսի հետ, Ֆրանսիայի Լիոն քաղաքից Գյումրի ժամանած հոգեբույժ-մասնագետների հետ, Գյումրու «Ավստրիական մոր և մանկան հիվանդանոցի» հովանավոր պրոֆեսոր Գյունտեր Պետերի հետ, ՀՀ-ում ԱՄՆ-ի փոխդեսպան Վուդվորդ Քլարկ Փրայսի հետ, «Արյա Տեքս» կարի արտադրամասի հովանավոր-բարերար Մասիս Ներսիսյանի հետ, «ԵԱՀԿ» երևանյան գրասենյակի նոստիկանական գծով փորձագետ Դեյվիդ Այենսոնի հետ, ՀՀ-ում «Ռուսպետհամագործակցության» ներկայացուցչության ղեկավար Մարկ Կալինինի հետ:

ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ս.Ն.Սուխորենկոյի հետ, Ավստրիայի արտաքին գործերի նախարար Սեբաստիան Կուրցի հետ, ՀՀ-ում Ղասախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Այիմդոս Բոզժիգիտովի հետ, ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան տիկին Քեթրին Ջեյն Լիչի և ՀՀ-ում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ռայներ Մորելի հետ:

2014 թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմում առկա թափուր պաշտոնները համալրելու համար տրվել է 31 հայտարարություն, անցկացվել է 15 մրցույթ, որի արդյունքում զբաղեցվել է 13 թափուր պաշտոն, ինչպես նաև զբաղեցվել է 4 կրտսեր թափուր պաշտոն, ատեստավորվել է 19 քաղաքացիական ծառայող, վերապատրաստվել է 35 քաղաքացիական ծառայող, կնքվել է 1 ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր տնօրենների թափուր պաշտոնները համալրելու համար տրվել է 6 հայտարարություն, անցկացվել է 5 մրցույթ, որի արդյունքում զբաղեցվել է 5 թափուր պաշտոն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր տնօրենների թափուր պաշտոնները համալրելու համար տրվել է 2 հայտարարություն, անցկացվել է 2 մրցույթ, որի արդյունքում զբաղեցվել է 1 թափուր պաշտոն:

2014 թվականին ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմում առկա թափուր պաշտոնները համալրելու համար տրվել է 31 հայտարարություն, անցկացվել է 15 մրցույթ, որի արդյունքում զբաղեցվել է 13 թափուր պաշտոն, ինչպես նաև զբաղեցվել է 4 կրտսեր թափուր պաշտոն, ատեստավորվել է 19 քաղաքացիական ծառայող, վերապատրաստվել է 35 քաղաքացիական ծառայող, կնքվել է 1 ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր տնօրենների թափուր պաշտոնները համալրելու համար տրվել է 6 հայտարարություն, անցկացվել է 5 մրցույթ, որի արդյունքում զբաղեցվել է 5 թափուր պաշտոն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր տնօրենների թափուր պաշտոնները համալրելու համար տրվել է 2 հայտարարություն, անցկացվել է 2 մրցույթ, որի արդյունքում զբաղեցվել է 1 թափուր պաշտոն:

ՀՀ Նախագահի աշխատակազմից, Ազգային Ժողովից, ՀՀ կառավարությունից, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ՀՀ Շիրակի մարզպետարան 2014թ. ստացվել են 2758 գրություններ, իսկ համայնքներից, քաղաքացիներից մարզային կազմակերպություններից ստացվել են 8301 դիմումներ, բողոքներ և առաջարկություններ: Ֆինանսական օգնություն է հատկացվել 780 դիմումատուի, բժշկական

օգնության դիմումներին տրվել է 118 դրական պատասխան: Ֆինանսական օգնություն է հատկացվել նաև 493 զոհված ազատամարտիկների և 115 Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների ընտանիքներին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

2014 թվականի տարեկան ծրագրով մարզի համայնքների բյուջեներով նախատեսված 1 մլդ 828 մլն 625 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի հավաքագրված եկամուտները կազմել են 1 մլդ 819 մլն 144 հազար դրամ, կամ սեփական եկամուտների առաջադրանքը կատարվել է 99.5%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը աճել է 4.9 %-ով, կամ ավել է հավաքագրվել 84 մլն 267 հազար դրամ:

Այդ թվում՝

ա) **Գյումրի քաղաքում** սեփական եկամուտների գծով փաստացի հավաքագրվել է 1 մլդ 025 մլն 471 հազար դրամ, կամ տոկոսային առումով հավաքագրման մակարդակը կազմում է 104.3%: Փաստացի կատարողականի աճի տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացիի համեմատությամբ աճել է 8.2 %-ով:

բ) **Ախուրյանի նախկին վարչական տարածքի** համայնքներում սեփական եկամուտների գծով փաստացի հավաքագրվել է 295 մլն 723 հազար դրամ, կամ տոկոսային առումով հավաքագրման մակարդակը կազմում է 90.8%: Փաստացի կատարողականի աճի տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացիի համեմատությամբ աճել է 6.5 %-ով:

գ) **Արթիկի նախկին վարչական տարածքի** համայնքներում սեփական եկամուտների գծով փաստացի հավաքագրվել է 230 մլն 571 հազար դրամ, կամ տոկոսային առումով հավաքագրման մակարդակը կազմում է 102.8%: Փաստացի կատարողականի աճի տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացիի համեմատությամբ նվազել է 3.4 %-ով:

դ) **Անիի նախկին վարչական տարածքի** համայնքներում սեփական եկամուտների գծով փաստացի հավաքագրվել է 135 մլն 773 հազար դրամ, կամ տոկոսային առումով հավաքագրման մակարդակը կազմում է 93.8%: Փաստացի կատարողականի աճի տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացիի համեմատությամբ աճել է 3.2%-ով:

ե) **Ամասիայի նախկին վարչական տարածքի** համայնքներում սեփական եկամուտների գծով փաստացի հավաքագրվել է 65 մլն 824 հազար դրամ, կամ տոկոսային առումով հավաքագրման մակարդակը կազմում է 85.4%: Փաստացի կատարողականի աճի տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացիի համեմատությամբ նվազել է 10.3 %-ով:

զ) **Աշոցքի նախկին վարչական տարածքի** համայնքներում սեփական եկամուտների գծով փաստացի հավաքագրվել է 65 մլն 782 հազար դրամ, կամ տոկոսային առումով հավաքագրման մակարդակը կազմում է 89.3%: Փաստացի կատարողականի աճի տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացիի համեմատությամբ նվազել է 0.4 %-ով:

2014 թվականի տարեկան ծրագրով պետական բյուջեից մարզի համայնքներին հատկացված դոտացիան կազմել է 3 մլրդ 778 մլն 787 հազար դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 144 մլն 384 հազար դրամով:

2014 թվականի տարեկան ծրագրով մարզի համայնքների բյուջեների եկամուտներում նախատեսված 386 մլն 116 հազար դրամ հողի հարկի դիմաց փաստացի հավաքագրվել է 354 մլն 293 հազար դրամ, կամ հավաքագրման մակարդակը կազմել է 91.8%: Հողի հարկի հավաքագրման փաստացի աճի մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացիի համեմատությամբ նվազել է 4.5 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 19 մլն 161 հազար դրամ:

2014 թվականի տարեկան ծրագրով մարզի համայնքների բյուջեների եկամուտներում նախատեսված 621 մլն 349 հազար դրամ գույքահարկի դիմաց փաստացի հավաքագրվել է 662 մլն 401 հազար դրամ, կամ հավաքագրման մակարդակը կազմել է 106.6%: Գույքահարկի հավաքագրման փաստացի աճի մակարդակը

նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացի համեմատությամբ աճել է 19.9%-ով, կամ ավել է հավաքագրվել 110 մլն 048 հազար դրամ:

Սեփական եկամուտների հավաքագրման պատկերը **01.01.2015թ.** դրությամբ հետևյալն է՝
/հազ. դրամ/

<i>Եկամուտների անվանումը</i>	2014թ. տարեկան ծրագիր	Փաստացի կատարողական առ 01.01.2015թ.	Կատարողական %	2013թ. տարեկան ծրագիր	Փաստացի կատարողական առ 01.01.2014թ.	Կատարողական %
Հողի հարկ	386,116.1	354,292.5	91.8	390,283.4	371,122.3	95.1
Գույքահարկ	621,348.8	662,401.0	106.6	551,411.0	552,352.9	100.2
Պետական տուրք	50,840.0	50,035.0	98.4	51,070.0	47,028.9	92.1
Տեղական տուրք	139,094.9	134,441.2	96.7	154,229.4	137,262.6	89.0
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	318,834.1	297,311.0	93.2	308,323.4	288,871.2	93.7
ա) հողի վարձավճար	284,235.3	260,839.6	91.8	285,757.2	265,473.6	92.9
բ) գույքի վարձավճար	34,598.8	36,471.5	105.4	22,566.2	23,397.7	103.7
Այլ եկամուտներ	312,392.0	320,663.7	102.6	328,088.5	338,239.4	103.1
Ընդամենը սեփական եկամուտներ	1,828,625.9	1,819,144.5	99.5	1,783,405.7	1,734,877.3	97.3

2014 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ

/ հազ.

դրամ/

Ծրագրերի անվանումը	Նախատեսված գումար	Ֆինանսավորում	Տնտեսում /2-3/	Ծանոթություն
1	2	3	4	
Ընդամենը ՀՀ Շիրակի մարզպետարանին ՀՀ 2014թվականի պետական բյուջեով նախատեսված՝ այդ թվում.	10528927.0	8949181.8	155818.0	Տնտեսված գումար փաստացի կնքված պայմանագրերի արդյունքում:
Կառավարման ապարատ	455417.7	450172.3	5245.4	
Կրթություն	6482646.3	6457273.4	25372.9	
Մշակույթ	155752.5	155752.5	0.0	
Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին	349977.6	349977.6	0.0	

Շենք շինությունների կապիտալ նորոգում / գ. Անուշավանի դպրոց/	29152.9	29031.6	121.3	
Կրթական օբյեկտների շինարարություն / 2014թ հրատապ ծրագիր/	74297.0	73741.5	555.5	
Կրթական օբյեկտների հիմնանորոգում: /2014թ հրատապ ծրագիր/	177242.5	176583.5	659.0	
Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում /2014թ հրատապ ծրագիր/	348953.9	348810.3	143.6	
Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման համար	105239.0	105103.4	135.6	
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում	665016.0	542360.9	122655.1	
Պահուստային ֆոնդից հատկացված գումար՝ այդ թվում.	1685231.6	260374.9	929.5	
Հրատապ լուծումների 2014-րդ ծրագրի՝ 1.Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին 2 Նախագծային աշխատանքներ	165206.0	164650.7	555.3	
/Համայնքներում/ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողներին նպատակային սոցիալական վճարների փոխհատուցման համար	17655.6	17655.6	0.0	
Լավագույն մարզական ընտանիքի համար	1200.0	1200.0	0.0	
Այլընտրանքային ծառայության անցած աշխատողներին՝ աշխատանքի վարձատրության համար	1170.0	795.8	374.2	
Բնակարանային խնդիրների լուծման նպատակով բնակարանների գնման վկայագրերի ձեռքբերման համար	1500000.0	76072.8	1423927.2	Չիրացված գումար , որը փոխանցվել է կենտրոնական գանձապետարանում բացված արտաբյուջետային հաշվին հմձ. ՀՀ կառ. 2014թ. թիվ 1151-Ն որոշ. 2015թ.- ին գործառույթներ

				իրականացնելու համար
Համահարթեցման սկզբունքով մարզի համայնքներին տրվող դոտացիաներ՝ այդ թվում.	3778337.5	3778337.5	0.0	
ք.Գյումրի	1706269.2	1706269.2	0.0	

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզպետարանն առաջնորդվելով 2014թ. տարեկան աշխատանքային ծրագրով, ինչպես նաև ընթացիկ հանձնարարականներով ու հիմնախնդիրներով, հաշվետու տարում կատարել է հետևյալ աշխատանքներն ըստ ոլորտների:

Կապիտալ շինարարություն

ՀՀ 2014թ. պետական բյուջեի միջոցներով և այլ ֆինանսական աղբյուրներով մարզում իրականացվել են 17,567 մլրդ. դրամ գումարի աշխատանքներ:

Այդ թվում՝

1. ՀՀ պետական բյուջեի հաշվին	8,501 մլրդ դրամ
1.1 ՀՀ Շիրակի մարզպետարանի պատվիրատվությամբ	2,392 մլրդ դրամ
1.2 ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ	1,113 մլրդ դրամ
1.3 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ	0,638 մլրդ դրամ
1.4 Գերմանական զարգացման բանկի աջակցությամբ	4,350 մլրդ դրամ
2. Այլ ֆինանսական աղբյուրներով՝	9,066 մլրդ դրամ
2.1 <input type="checkbox"/> Հայաստան <input type="checkbox"/> համահայկական հիմնադրամ	0,173 մլրդ դրամ
2.2 Հայաստանի կաթողիկե եկեղեցի	0,170 մլրդ դրամ
2.3 <input type="checkbox"/> Ավստրիական Կարիտաս <input type="checkbox"/>	1,250 մլրդ դրամ
2.4 <input type="checkbox"/> Վորլդ Վիժն ինթերնեյշնլ <input type="checkbox"/> միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ	0,0067 մլրդ դրամ
2.5 «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն	0,0073 մլրդ դրամ
2.6 Համայնքային ներդրումներ՝ Գյումրի քաղաքի փողոցների վերանորոգում	0,250 մլրդ դրամ
2.7 Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ	0,426 մլրդ դրամ
2.8 Այլ ֆինանսական ներդրումներ (ներառյալ մասնավոր ներդրումները)	6,783 մլրդ դրամ

Մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը մեծապես նպաստեց ՀՀ կառավարության 10.04.2014թ. N 532-Ն որոշմամբ մարզին հատկացված 757,7 մլն. դրամ գումարը:

Ծրագիր են ընդգրկվել թվով 30 օբյեկտներ (25 համայնքներում):

Կապիտալ սուբվենցիա համայնքներին (պահուստային ֆոնդ):

(ՀՀ Շիրակի մարզի 9 համայնքներում)

իրականացվող աշխատանքների համաֆինանսավորման
և 4 համայնքներում հակակարկտային կայանների

ձեռք բերման նպատակով) 13 համայնք

79 000,0 մլն. դրամ:

21 կրթական օբյեկտների (դպրոցներ) մասնակի վերաներոգում՝

որից 5 օբյեկտի ջեռուցման համակարգի անցկացում

286 000,0 մլն. դրամ:

9 ավտոճանապարհների (փողոցների) հիմնանորոգում

349 360,0 մլն. դրամ:

Նախագծային աշխատանքներ

43 340,0 մլն. դրամ:

ՀՀ Նախագահի 2008թ. հուլիսի 30-ի թիվ ՆԿ-128-Ս կարգադրությամբ հաստատված ժամանակացույցով իրականացվող և դեռևս չավարտված աշխատանքները ներառված են 2013-2015 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերում և ներկայացվել են համապատասխան ոլորտային գերատեսչություններին:

Մարզում իրականացված աշխատանքներն ըստ բնագավառների

Բնակարանաշինություն

Երկրաշարժի պատճառած վնասների վերականգնման նպատակով 2014-2017թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. նախատեսված 1897.5 մլն. դրամի դիմաց ՀՀ պետական բյուջեից հատկացված 1500.0 մլն. դրամի շրջանակներում Գյումրի քաղաքում մինչև տարեվերջ իրականացվելու է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 215 ընտանիքների բնակարանային ապահովում՝ բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցության տրամադրմամբ: Այս պահի դրությամբ տրամադրվել է թվով 100 բնակարանի գնման վկայագրեր:

Ախուրյան գյուղում ընթացքի մեջ է 108 բնակարաններով թվով 3 բազմաբնակարան բնակելի շենքերի շինարարությունը:

ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշմամբ հաստատված Զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ կարիքավոր ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգի համաձայն ամփոփվել և համապատասխան գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարություն են ուղարկվել 03.04.2014թ. դրությամբ ՀՀ Շիրակի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի համայնքների ղեկավարների կողմից ներկայացված զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ բնակարանի կարիքավոր ընտանիքների հերթացուցակները:

ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարների կողմից 2005-2014թթ հաշվառած զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) բնակարանի կարիքավոր ընտանիքների հերթացուցակներում ընդգրկված 160 ընտանիքներից 67 անօթևան ընտանիքների բնակարանային գործերը ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան գրությամբ ներկայացվել են ՀՀ պաշտպանության նախարարության ԶՄՊ վարչություն:

Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում Ամերիկյան Կարմիր խաչի, Հանթսման մարդասիրական բնակարանային շինարարության ծրագրի, ՀՀ պետական բյուջեի և Լինսի հիմնադրամի ֆինանսական միջոցներով կառուցված բնակարանների սեփականաշնորհման գործընթացի շրջանակներում հատկացված բնակարաններն անհատույց համատեղ սեփականության իրավունքով քաղաքացիներին տրամադրելու նպատակով կայացվել է ՀՀ Շիրակի մարզպետի թվով 54 որոշում: ՀՀ Շիրակի մարզպետի և քաղաքացիների միջև կնքվել են պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ թվով 62 պայմանագրեր:

Բնակարանաշինության ոլորտում 2014թ. նախատեսված աշխատանքները ներկայացվում են աղյուսակ 1-ում:

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Ֆինանսավորման աղբյուրը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Կատարվել է 2014թ. /մլն.դրամ/
1	Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 215 ընտանիքների բնակարանային ապահովում	ՀՀ պետական բյուջե	1500.0	Ընթացքի մեջ է
2	գ. Ախուրյան 108 բնակարաններով թվով 8 բազմաբնակարան շենքերի շինարարություն	ՀՀ պետական բյուջե	397.5	Ընթացքի մեջ է
	Ընդամենը		1897.5	

Կրթական օբյեկտների շինարարություն

2014թ.-ին մարզի 8 կրթական օբյեկտներում կատարվել է 1304.7 մլն. դրամ գումարի շինարարական աշխատանքներ:

ՀՀ պետական բյուջեից հատկացված և այլ ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել են թվով 2 նոր օբյեկտի կառուցման, 4-ում հիմնանորոգման (որից 1-ում աշխատանքներն ավարտվել են, 3-ում աշխատանքներն ընթացքի մեջ են), թվով 2 մանկապարտեզների կառուցման աշխատանքներ:

ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 10-ի N 532-Ն որոշմամբ մարզի առաջնահերթ լուծում պահանջվող կրթական օբյեկտների վերանորոգման համար լրացուցիչ հատկացվել է 286.0 մլն. դրամ գումար, որով իրականացվել են 21 կրթական օբյեկտների (դպրոցներ) մասնակի վերանորոգում, որից 5-ում՝ անցկացվել են ջեռուցման համակարգեր:

Ըստ առանձին օբյեկտների՝ տվյալները ներկայացվում են աղյուսակի 2-ում:

Դպրոցաշինություն

ՀՀ Շիրակի մարզպետարանի պատվիրատվությամբ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին ավարտվել է Անուշավան գյուղի դպրոցի հիմնանորոգման ծրագրի կատարումը:

Հատկապես ծավալուն և նպատակային աշխատանքներ իրականացվեցին մարզում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ կառավարության 10.04.2012թ. N 532-Ն որոշմամբ մարզի դպրոցներին հատկացված 286.0 մլն. դրամ գումարի շրջանակներում:

Ուշադրության արժանացնելով կրթական օբյեկտների նորմալ ջեռուցման խնդրի լուծմանը, իրականացվել են Ջաջուռ, Ջրառատ, Հայրենյաց, Մեծ Սեպասար և Քարաբերդ համայնքների դպրոցների, գազաֆիկացման և ջեռուցման համակարգերի անցկացման աշխատանքները):

Մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Գյումրի քաղաքի թիվ 27 Երազգավորս, Բասեն, Հայկավան, Սարալանջ, Հարթաշեն, Շիրակավան, Բագրավան, Չորակապ, Լուսակերտ, Կարմրավան, Կառնուտ, Փոքր Մանթաշ, Արթիկ, Նահապետավան համայնքների դպրոցների շենքերում:

Այս աշխատանքների իրականացման գործընթացի շրջանակներում վարչությունը ժամանակին ապահովել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, այդ նպատակով ինժեներական ենթակառուցվածքների տեխնիկական պայմանների ձեռք բերման, տեխնիկական հսկողություն

իրականացնող անձանց և շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպությունների ընտրության մրցույթների կազմակերպման, շինմոնտաժային աշխատանքների ընթացքի և որակի վերահսկողության, փաստացի կատարված աշխատանքների կատարողական ակտերի չափագրման, ձևակերպման և վճարման ներկայացման ամենամյա հաշվետվությունների ներկայացման, օբյեկտների ավարտական ակտերի ձևակերպման, դրանց շահագործման փաստագրման և այլ աշխատանքների իրականացումը:

Ոլորտում նպատակային բարոփոխումներ իրականացնելու համար նկատելի աշխատանքներ են իրականացվել նաև ՀՀ պետական բյուջեից հատկացված, ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ:

Ավարտվել է Գյումրիի ՀՀ ԳԱԱ Ա.Նազարյանի անվան ԵԻՄԻ անավարտ շենքի կառուցումը:

Հայաստան համահայկական հիմնադրամի կողմից ավարտվել է Աշոցք գյուղի նոր դպրոցական շենքի կառուցման աշխատանքները:

Չնայած կատարված ծավալուն աշխատանքների այնուամենայնիվ ոլորտում առկա է մի շարք դպրոցների մարզադահլիճների կառուցման (16 համայնք), 3 համայնքներում նոր դպրոցների կառուցման (Վարդաքար, Արեգնադեմ և Ջաջուռավան), 72 համայնքներում կրթական օբյեկտների վերանորոգման աշխատանքների կատարման անհրաժեշտությունը, որոնք ընդգրկված են մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2014-2017թ.թ քառամյա ծրագրում:

	Օբյեկտի անվանումը	Ֆինանսավորման աղբյուրը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Կատարվել է 2014թ.
	Կրթական օբյեկտներ			
1	Երազգավորս համայնքի դպրոցի մարզադահլիճի հատակների վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	10,0	Ավարտվել է
2	Բասեն համայնքի դպրոցի մարզադահլիճի հատակների և տանիքի մասնակի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	11,0	Ավարտվել է
3	Հայկավան համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	12,0	Ավարտվել է
4	Սարալանջ համայնքի դպրոցի պատուհանների վերանորոգում և ջրհորդանների տեղադրում	ՀՀ Պետական բյուջե	16,0	Ավարտվել է
5	Շիրակավան համայնքի դպրոցի մարզադահլիճի և հանդիսությունների սրահի պատուհանների փոխարինում և մասնակի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	13,0	Ավարտվել է
6	Բագրավան համայնքի դպրոցի տանիքի մասնակի և մարզադահլիճի հատակների վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	10,0	Ավարտվել է
7	Ջորակապ համայնքի դպրոցի պատուհանների մասնակի փոխարինում	ՀՀ Պետական բյուջե	12,0	Ավարտվել է

8	Լուսակերտ համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	13,0	Ավարտվել է
9	Կարմրավան համայնքի դպրոցի շենքի մասնակի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	10,0	Ավարտվել է
10	Գյումրու թիվ 27 դպրոցի պատուհանների և դռների մասնակի փոխարինում	ՀՀ Պետական բյուջե	14,0	Ավարտվել է
11	Կառնուտ համայնքի դպրոցի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	15,0	Ավարտվել է
12	Փոքր Մանթաշ համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	16,0	Ավարտվել է
13	Արթիկ համայնքի թիվ 5 դպրոցի պատուհանների փոխարինում	ՀՀ Պետական բյուջե	8,0	Ավարտվել է
14	Նահապետավան համայնքի դպրոցի շենքի մասնակի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	14,0	Ավարտվել է
15	Քարաբերդ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	ՀՀ Պետական բյուջե	17,0	Ավարտվել է
16	Ջրառատ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	ՀՀ Պետական բյուջե	15,0	Ավարտվել է
17	Հարթաշեն համայնքի դպրոցի արտաքին կոյուղագծի կառուցում	ՀՀ Պետական բյուջե	5,0	Ավարտվել է
18	Հայրենյաց համայնքի դպրոցի վերանորոգում և ջեռուցման համակարգի կառուցում	ՀՀ Պետական բյուջե	15,0	Ավարտվել է
19	Ջաջուռ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	ՀՀ Պետական բյուջե	17,0	Ավարտվել է
20	Մեծ Մեղասար համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	ՀՀ Պետական բյուջե	7,0	Ավարտվել է
21	Վարդաքար համայնքի մշակույթի տան (Ժամանակավոր գործող դպրոցի) տանիքի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	9,6	Ավարտվել է
22	Գյումրի-ՀՀ ԳԱԱ Ա.Նազարյանի անվան ԵԻՄԻ անավարտ շենքի կառուցում	ՀՀ Պետական բյուջե	298,4	Ավարտվել է
23	Որսի մարզի թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանի ՊՈԱԿ-ում սահմանափակ կարողություններ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ հարմարություններով (սանդուղքներ, թեքահարթակներ, բազրիքներ, վերելակներ) համալրման աշխատանքներ	ՀՀ Պետական բյուջե	100,0	Ընթացքի մեջ է
24	Որսի մարզի թիվ 3 արհեստագործական պետական ուսումնարանի ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներ	ՀՀ Պետական բյուջե	182,2	Ընթացքի մեջ է

25	Սամասիայի արհեստագործական պետական ուսումնարան ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներ	ՀՀ Պետական բյուջե	135,0	Ընթացքի մեջ է
26	Աշոցք համայնքի միջնակարգ դպրոցի կառուցում	ՀՀ	60,0	Ավարտվել է
27	Ագատան համայնքի մանկապարտեզի կառուցում	ՀՀ պետական բյուջե ՀՄՆՀ	95,0	Ավարտվել է
28	Գեղանիստի մանկապարտեզի շենքի կառուցում	Բարերար	90,0	Ավարտվել է
29	Անուշավան համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	29,1	Ավարտվել է

Առողջապահություն

Ընթացիկ տարում ՀՄՆՀ-ի հատկացված միջոցներով ավարտվել են Մարալիկ քաղաքի հիվանդանոցի հիմնանորոգման աշխատանքները, ընթացքի մեջ է «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիայի» կառուցման աշխատանքները:

Ըստ առանձին օբյեկտների տվյալները ներկայացվում են աղյուսակի տեսքով:

	Օբյեկտի անվանումը	Ֆինանսավորման աղբյուրը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Կատարվել է 2014թ.
	Առողջապահական օբյեկտ			
1	ք. Գյումրի Պաթոլոգոանատոմիական լաբորատորիա -ի նոր շենքի կառուցում	ՀՄՆՀ	150,0	Ընթացքի մեջ է
2	Մարալիկի հիվանդանոցի շենքի հիմնանորոգում	ՀՄՆՀ	67,0	Ավարտվել է

Մշակույթի և սպորտի օբյեկտների շինարարություն

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից Գյումրի քաղաքում իրականացվել են ֆուտբոլի ակադեմիայի, Ամասիայի մարզադպրոցի կառուցման, իսկ ՀՄՆՀ-ի կողմից Ամասիայի մարզամշակութային կենտրոնի վերանորոգման աշխատանքները:

Հարկ է նշել, որ մարզում դեռևս նշանակալի ծրագրեր չեն իրականացվում մշակութային օբյեկտների, մասնավորապես՝ գյուղական համայնքների մշակույթի տների հիմնանորոգման, նորերի կառուցման ուղղությամբ, որոնք գնալով առավել քայքայվում և կորցնում են իրենց պիտանելիությունը:

Չնայած դրանց մի մասը նույնպես ընդգրկվել են մարզի զարգացման քառամյա ծրագրում սակայն դեռևս գործնական քայլեր չեն ձեռնարկվում:

Ըստ առանձին օբյեկտների տվյալները ներկայացվում են աղյուսակի տեսքով.

	Օբյեկտի անվանումը	Ֆինանսավորման աղբյուրը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Կատարվել է 2014թ.
	Սպորտային օբյեկտներ			
1	Ամասիայի մարզամշակութային կենտրոն	ՀՄՆՀ	114,0	Ավարտվել է
2	Մուշ-2 թաղամաս Գյումրու ֆուտբոլի ակադեմիա	Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա	60,0	Ավարտվել է
3	Ամասիայի մարզադաշտ	Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա	20,0	Ավարտվել է

Այլ օբյեկտներ

2014թ. Ավարտվել և շահագործման է հանձնվել է Գյումրու տեխնոպարկի գործունեության համար անհրաժեշտ շենքերի հիմնանորոգման աշխատանքները:

Ունեցող համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ ավարտվել է Գյումրու ՍԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՊՈԱԿ-ի տարածքում ծածկած լողավազանի կառուցման աշխատանքները:

Հայ առաքելական եկեղեցու կողմից ավարտվել և շահագործման է հանձնվել Գյումրիի Ունեցող համահայկական հիմնանորոգման, իսկ Հայաստանի հայ կաթողիկե եկեղեցու միջոցներով՝ ՍԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ կառուցման աշխատանքները:

ՍԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒ ՂԵՐՄԱՆ ԴՆԹԱԳՔԻ ՄԵՋ Ե ԵՐԵՎԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԱՐԵՎԱԿԻ ԲԱԳՄԱԿԻ ՀԱՉՄԱՆՈՒՄՈՒՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՎԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ:

Ճանապարհաշինություն

Հաշվետու ժամանակաշրջանում մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման 5-րդ փուլով և այլ ծրագրերով նշանակալի աշխատանքներ են իրականացվել ներհամայնքային փողոցների վերանորոգման ուղղությամբ:

Գյումրու համայնքային բյուջեի միջոցներով հիմնանորոգվել է Գյումրի քաղաքի Սպանդարյան փողոցը ամբողջությամբ, ինչպես նաև իրականացվել են Գյումրի քաղաքի մի շարք փողոցների փոսային նորոգման աշխատանքներ:

ՀՀ պետ. բյուջեով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձևաչափի և ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների իրականացման համար իրականացվել է 510,0 մլն դրամ գումար: ՀՀ պետ. բյուջեով Շիրակի մարզային նշանակության ավտոճանապարհային ճանապարհների ձևաչափի և ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների համար իրականացվել է 105,2 մլն. դրամ գումարի աշխատանքներ:

Իրականացվել է մարզի տարածքով անցնող ընդհանուր 160կմ երկարությամբ մարզային նշանակության ավտոճանապարհների ամառային և ձմեռային պահպանության և սպասարկման աշխատանքներ (մասնավորապես ձմռան ամիսներին տեղացած առատ ձյան պայմաններում հնարավորինս ապահովվել է ավտոճանապարհների անխափան երթևեկությունը):

ՀՀ կառավարության 10 ապրիլի 2014թ. N 532-Ն որոշմամբ մարզին հատկացված 349,36 մլն. դրամ գումարի շրջանակներում իրականացվել է 9 ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

	Օբյեկտի անվանումը	Ֆինանսավորման աղբյուրը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Կատարվել է 2014թ.
	1.Ճանապարհաշինություն			
1	Գյումրի համայնքի Շիրակացի փողոցի վերանորոգում (Ալեք Մանուկյան փողոցից մինչև Դուրյան փողոց)	ՀՀ Պետական բյուջե	124,4	124,4
2	Գյումրի համայնքի Պոռշյան փողոցի (Գ. Նժդեհ փողոցից մինչև մարզային ոստիկանության շենք) մասնակի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	15,0	15,0
3	Գյումրի համայնքի Գորկու փողոցի մասնակի վերանորոգում (Մուսայելյան փողոցից մինչև Խաղաղության օղակ)	ՀՀ Պետական բյուջե	80,0	80,0
4	Ախուրյան համայնքի Վազգեն Ա փողոցի մասնակի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	40,0	40,0
5	Հովունի համայնք մտնող ճանապարհի մասնակի վերանորոգում (ավազակոպիճային ծածկույթ)	ՀՀ Պետական բյուջե	10,0	10,0
6	Մարալիկ համայնքի Թումանյան փողոցի մասնակի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	40,0	40,0
7	Չորակապ համայնքի 1-ին փողոցի մասնակի վերանորոգում	ՀՀ Պետական բյուջե	20,0	20,0
8	Արթիկ համայնքի Անկախության փողոցի մասնակի փոսային նորոգում	ՀՀ Պետական բյուջե	10,0	10,0
9	Մ-1 Սարազյուղ ճանապարհի մասնակի վերանորոգում (ավազակոպիճային ծածկույթ)	ՀՀ Պետական բյուջե	10,0	10,0
	Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ այդ թվում			
10	Ավտոմոբիլային ճանապարհների մարզային (տեղական նշանակության) ընթացիկ, ձմեռային պահպանություն և շահագործում(ճանապարհի երկ.-458.3կմ.)	ՀՀ Պետական բյուջե	105,2	105,2

Այնուամենայնիվ, եթե մարզի տարացքով անցնող միջպետական և մասամբ հանրապետական նշանակության ճանապարհները համեմատաբար բարվոք են, ապա նույնը չի կարելի ասել ներհամայնքային և միջպետական ճանապարհների մասին, որոնք տարիներ շարունակ չեն վերանորոգվում և գտնվում են անմխիթար վիճակում:

Տրանսպորտ

Մարզում բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային և օդային տրանսպորտով:

Մարզում գործում է ՈՇիրակ Օդանավակայանը, որն ապահովում է օդային կապը ԱՊՀ երկրների հետ և հնարավորություն ունի ընդունել ցանկացած տեսակի ինքնաթիռ:

Կարևորելով ներմարզային ավտոմոբիլային հաղորդակցությունների դերը սոցիալական ծառայությունների հասանելիության, գյուղատնտեսության զբոսաշրջության զարգացման աշխատուժի շարժունակության ավելացման, ինչպես նաև տնտեսական և սոցիալական տարածաշրջանների անհամաչափությունների մեղմացման գործում էականորեն բարելավվել են մարզի տեղական նշանակության ճանապարհներին ուղղվող պետական աջակցության ծավալները:

Ներմարզային ավտոճանապարհների վերանորոգման աշխատանքներից հետո զգալիորեն բարելավվել է համայնքների կապը մարզկենտրոնի հետ, նպաստավոր պայմաններ են ստեղծվել ուղևորների անվտանգ սպասարկման և բեռնափոխադրումների համար:

Մարզում գործում են 26 ավտոբուսային և 48 միկրոավտոբուսային ներմարզային երթուղիներ: Մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության համար անցկացվել են 12 երթուղիների մրցույթներ:

Գյումրի, Արթիկ և Մարալիկ քաղաքները ապահովված են Երևանի հետ ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներով: Մարզի քաղաքները կապված են նաև Վանաձոր, Սպիտակ, Արմավիր, Վաղարշապատ, Ստեփանավան, Ապարան և Թալին քաղաքների հետ:

Մարզի տրանսպորտային համակարգի զարգացումը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է իրականացնել գործնական միջոցառումներ ավտոտրանսպորտային միջոցների թաքմացման և նորացման ուղղությամբ:

Ջրամատակարարում և ջրահեռացում

ՀՀ Շիրակի մազպետի 24.08.2014թ թիվ 01/4093-14 և 11.10.2014թ թիվ 01/5399-14 գրություններով ՈչայջրմուղկոյուղիՓՓԲԸ-ին առաջարկվել է լուծում տալ Անի, Անիավան, Բագրավան, Մարակապ, Ջրափի, Հայկաձոր, Աղին, Իսահակյան, Լուսակերտ և Շիրակավան կամայնքների խմելու ջրի մատակարարման խնդիրներին, սակայն դրանց դեռևս ընթացք չի տրվել:

ՀՀ Շիրակի մարզպետարանը բազմակողմանի աջակցություն է ցուցաբերել KFW և Ասիական զարգացման բանկերի կողմից Ախուրյանի, Անի կայարանի և Գյումրի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման գործին:

Համագործակցություն է ապահովվել մարզային հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության հետ, ՕԿՋ-ների լուսավորվածության, պահպանության, խմելու ջրի քլորացման աշխատանքների վերահսկողության գործում:

Էներգոմատակարարում

Ուներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգ շահագործումն ապահովելու միջոցառումների մասին՝ ՀՀ կառավարության 03.06.2004թ N 1102-Ն որոշման պահանջների կատարման շրջանակներում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ էներգետիկ անվտանգության գոտիներում նոր շենքերի և շինությունների կառուցումը բացառելու ուղղությամբ::

Ավարտվել է ՈւԳյումրի-2Ո 220/110/10 կվ ենթակայանի վերանորոգման աշխատանքները, ՈՂարսՈ մասնաճյուղ:

Գազամատակարարում

ՈչայՌուսգազարդՈ ՓԲԸ կանոնադրական կապիտալում Հայաստանի Հանրապետության բաժնեմասի ավելացմանն ուղղված միջոցառումների մասին՝ ՀՀ կառավարության 24.09.2010թ. N 1254-Ն որոշման

կատարման նպատակով շարունակվում է ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից գազատարների ընդունման հանձնման գործընթացը:

Հանրապետական գործադիր մարմինների հետ համագործակցության արդյունքում գազիֆիկացվել են Գյումրու ՍՄուշ-2-2Ո թաղամասի թվով 1756 բնակարաններ:

Մասնավոր ներդրումների հաշվին մարզի գյուղական բնակավայրերում իրականացվել են շուրջ 300 տնտեսությունների գազիֆիկացման աշխատանքներ /16.7 մլն դրամի/:

Առաջարկություն է ներկայացվել գազաֆիկացնել ՀՀ Շիրակի մարզի սահմանամերձ համայնքներից ևս 5-ը (Մարագյուղ, Բավրա, Միզավետ, Ղազանչի, Թավշուտ):

Վարչությունը համագործակցված աշխատանք է տարել նաև այլ պատվիրատուների կողմից մարզում իրականացված աշխատանքներին օժանդակելու, այդ թվում օբյեկտների նախագծային աշխատանքների ելակետային տվյալների ապահովման, առաջացած ընթացիկ հարցերին լուծում տալու և այլ գործընթացներում: Հատկապես վարչության կողմից մշտական ուշադրության է դարձվել Գյումրի քաղաքի ՍՄուշ-2-2Ո և ՍԱնիՈ թաղամասերում ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատությամբ իրականացված բնակարանային շինարարության աշխատանքներից հետո նկատված թերությունները ներկայացրել պատվիրատուին դրանք շտկելու առաջարկությամբ:

Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացում՝ համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունների համաձայնեցումների գործընթաց՝ 12 հատ:

ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքների կառուցապատման կանոնակարգման միջոցառումների իրականացում՝ Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում հողահատկացումների համաձայնեցումներ են կատարվել թվով 2 օբյեկտներում:

Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գործընթացին առնչվող և քաղաքաշինական գործունեությունը կարգավորող գործառույթների իրականացում՝ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ առանձնացված տարածքներում կառուցապատումներ իրականացնելու նպատակով իրականացվել է Գյումրու քաղաքապետի կողմից ներկայացված հողահատկացումների 13 առաջարկությունների և տարբեր նշանակության 82 օբյեկտների նախագծային փաստաթղթերի համաձայնեցումներ:

Մարզի թվով 27 համայնքներում քաղաքաշինության բնագավառում իրականացվել է վարչական հսկողության աշխատանքներ:

ՀՀ օրենսդրության և նորմատիվային պահանջների խախտումների վերաբերյալ անցկացվել են ըստ անհրաժեշտության ստուգումներ և խախտումները վերացնելու վերաբերյալ 15 գրություն է ուղարկվել համապատասխան մարմիններին:

Ստացվել են պետական և մասնավոր ներդրումներով կառուցվող տարբեր նշանակության 74 օբյեկտների շինարարության թույլտվություններ և 13 օբյեկտների քանդման թույլտվություններ:


ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ստացվել են 54 օբյեկտների ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2014թ. ՀՀ Շիրակի մարզում գործող ձեռնարկությունների կողմից թողարկվող արտադրանքի ծավալը կազմել է **48.9 մլրդ դրամ**, /նախորդ տարի՝ **42.6 մլրդ դրամ**/, պատրաստի արտադրանքի իրացումը կազմել է

42.1 մլրդ դրամ, /նախորդ տարի՝ 41.6 մլրդ դրամ/: Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է - 114.4 %:

2014թ. ընթացքում արտադրանք են թողարկել մոտ 114 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից մոտ 80-ը մշակող արդյունաբերության ճյուղի ընկերություններ են: Արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր քանակում գերակշռում են գերփոքր և փոքր ընկերությունները, որոնց տեսակարար կշիռը կազմում է շուրջ 83% :



- Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
- Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում
- Մշակող արդյունաբերություն
- Ջրամատակարարում, կոյուղի. թափոնների կառավարում և վերամշակում

Մարզի արդյունաբերությունն ունի հետևյալ ճյուղային կառուցվածքը

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	- 12,7%
Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	- 0.13 %
Մշակող արդյունաբերություն	- 84.9%
Ջրամատակարարում, կոյուղի. թափոնների կառավարում և վերամշակում	- 2.27%

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը և իրացումը ըստ տնտեսական գործունեության տեսակների

<i>Տնտեսական ցուցանիշներ</i>	<i>Թողարկվող արտադրանքի ծավալը /ընթացիկ գներով/</i>	<i>աճի ինդեքսը %-ով</i>	<i>Իրացված արտադրանքի ծավալը</i>
Արդյունաբերական արտադրանքի ծավալը այդ թվում	48 մլրդ 915 մլն դրամ	114.4	41մլրդ 805 մլն դրամ
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	4 մլրդ 960 մլն դրամ	133.3	2 մլրդ 741մլն դրամ
Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	71.5 մլն դրամ	117.5	26.7 մլն դրամ
Մշակող արդյունաբերություն	42 մլրդ 921 մլն դրամ	122.1	14 մլրդ 466 մլն դրամ
Ջրամատակարարում, կոյուղի. թափոնների կառավարում և վերամշակում	939.1 մլն դրամ	105.5	468.9 մլն դրամ

Մարզի ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքը իրացվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ ԱՊՀ և արտերկրներում:

Արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր քանակում գերակշռում են գերփոքր և փոքր ընկերությունները, որոնց տեսակարար կշիռը կազմում է մոտ 87% : Մարզի տնտեսավարող սուբյեկտների և օտարերկրյա ներդրողների կողմից մարզում իրականացվել ու իրականացվում են մի շարք ծրագրեր՝

-Գյումրիում շահագործման հանձնվեց <<Լենտեքս>> ՄՊԸ-ի միջոցներով կառուցվող նոր արտադրական մասնաշենքը, որը անխափան գործում է և որտեղ ստեղծվեցին շուրջ 220 նոր աշխատատեղեր:

-Շարունակում են <<Արմամաստ>> ՄՊԸ-ի ածիկի արտադրություն նոր ձեռնարկության կառուցման աշխատանքները, որտեղ նախատեսվում է ստեղծել 150 աշխատատեղ:

- Կատարված ներդրումների արդյունքում Գյումրիում և մարզի այլ համայնքներում ստեղծվել են նաև մի քանի նոր փոքր ձեռնարկություններ, որոնցից մեկը՝ <<ԱՐԻՍՏԵՔՍ>> կարի ձեռնարկությունը թողարկած արտադրանքը ամբողջությամբ իրացնում է արտերկրներում:

Շահագործման հանձնվեց Գյումրի Տեխնոլոգիական կենտրոնը: Ստեղծվեց շուրջ 6000 քառակուսի մետր մակերեսով ամբողջական համալիր, որը կնպաստի գործարար միջավայրի բարելավմանը և Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը: Տեխնոլոգիական կենտրոնը հանդիսանում է

բարձրակարգ ենթակառուցվածքներով և ժամանակակից ցանցային տեխնոլոգիաներով հագեցած միջավայր, որում սերտորեն կհամագործակցեն ու միմյանց կաջակցեն կրթությունը, գիտությունը ու բիզնեսը, կիթանվի բիզնեսի և գիտության զարգացումը, սկսնակ ընկերությունների աշխատանքը:

Հանրահայտ <<Դ-Լինկ ինտերնեշնլ>> ընկերությունը Գյումրի քաղաքում կառուցում է հետազոտությունների կենտրոն: Ըստ ներդրումային ծրագրի՝ կենտրոնի կառուցման համար ընկերությունը շուրջ 8.5 մլն ԱՄՆ դոլարի ներդրում է իրականացնելու և ստեղծելու է մոտ 50 աշխատատեղ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ երիտասարդ կադրերի մոտ անընդհատ աճող հետաքրքրության և կատարված ներդրումների շնորհիվ մարզում հաջողությամբ գործող Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոնի շրջանավարտները աշխատում են հանրապետության համապատասխան ընկերություններում, ինչը խթան է հանդիսանում ընդլայնելու երիտասարդության ընդգրկվածությունը այդ ոլորտում:

ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) Հայաստանի ծրագրերի գրասենյակի հետ աշխատանք է տարվում մարզի փոքր ու միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող երիտասարդ ձեռնարկատերերի շրջանում՝ ուսուցման, վարկավորման և նոր աշխատատեղեր ստեղծելու ծրագրեր իրականացնելու նպատակով: Վերը նշված ծրագրով վարքավորվել են 11 ընկերություններ շուրջ 50 մլն դրամ:

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի «Թրփանձեան Գյուղական Համայնքների Չարգացման Ծրագրի» կողմից ամեն տարի մարզի տարբեր համայնքներում իրականացվում են համայնքների զարգացման մի շարք ծրագրեր:

Միայն 2014թ. հիմնադրամի կողմից մարզի 11 գյուղական համայնքներում բացվել են հացի և լավաշի, կահույքի արտադրամասեր, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կետ, մթերային եվ շինարարական ապրանքների խանութներ՝ ապահովելով 33 նոր աշխատատեղեր համայնքների բնակիչների, իսկ Կամո և Ջրավի համայնքներում հիմնադրամը աջակցել է մեղվապահության ստեղծման և կայացման գործում:

ՀՀ Շիրակի մարզում գործող փոքր ու միջին ձեռնարկությունները 2014 թվականին մասնակցել են <<Prodexpo>> ցուցահանդեսին և <<Զարուբեժ-Էքսպո հայ-ռուսական միջտարածաշրջանային 6րդ ցուցահանդեսին>>, ներկայացրել մարզում թողարկվող արտադրանքը, ձեռնարկությունների կարողությունները և հնարավոր համագործակցության ուղղությունները:

Շիրակի մարզի տնտեսության ոլորտներում կատարվող ներդրումները դրական ազդեցություն են թողել արդյունաբերության և փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտներում, սակայն կատարված ներդրումների ծավալները դեռևս բավարար չեն մարզի տնտեսության զարգացման, արտադրության տեխնիկական վերազինման և ժամանակակից տեխնոլոգիաների ձեռք բերման համար:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2014թ. ՀՀ Շիրակի մարզում գործել են մոտ 1092 առևտրի օբյեկտներ, այդ թվում խանութներ, շուկաներ, կրպակներ և առևտրի այլ օբյեկտներ: Մանրածախ առևտրի շրջանառությունը, կազմել է **37.3 մլրդ դրամ**, /նախորդ տարի՝ 1031 առևտրի օբյեկտներ՝ **28.6 մլրդ դրամ**/, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը կազմել է **22.2 մլրդ դրամ**, /նախորդ տարի՝ **16.1 մլրդ դրամ**/:

Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկողություն է իրականացվել համայնքներում գործող առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների նկատմամբ,

իրականացված վերահսկողության արդյունքների մասին ներկայացված հաշվետվությունները ուսումնասիրվել, ամփոփվել են և համապատասխան տեղեկատվությունն ու առաջարկությունները ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծություն. 2014 թվականին մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում ցանված ընդհանուր գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ պատկերը.

Հացահատիկ՝ 2013թ.-42381հա 2014թ.-43916հա-ի դիմաց, կարտոֆիլ՝ 2013թ.-4219հա 2014թ.-4267հա-ի դիմաց, կերային մշակաբույսեր՝ 2013թ.-12600հա 2014թ.137331հա-ի դիմաց, բանջարեղեն՝ 2013թ.-1634հա 2014թ.-1696հա-ի դիմաց:

Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են շուրջ 2782 հա-ով: Մարզում ընդհանուր ցանքը 2014թ. կազմել է 63646ա, նախորդ տարվա 60864հա-ի դիմաց:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում.

h/h	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ պակաս /հա/
		2013թ.	2014	
1.	Հացահատիկ	42381	43916	+1535
	Այդ թվում՝ աշնանացան ցորեն	22698	24388	+1690
	գարնանացան գարի	19683	19528	-155
2.	Կարտոֆիլ	4219	4267	+48
3.	Բանջարեղեն	1634	1696	+62
4.	Կերային մշակաբույսեր	12600	13733	+1133
5.	Տեխնիկական մշակաբույսեր	30	34	+4
		60864	63646	+2782

Ընթացիկ տարում բերքահավաքը կատարվել է ժամանակին առանց ձգձգումների, բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2013-2014թթ. ունի հետևյալ տեսքը.

h/h	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Միջին բերք /g/		Համախառն բերք /տ/		Համախառն բերքի աճ /հազ. տոննա /	Համախառն եկամուտ /մլրդ դրամ/		Համախառն եկամուտի աճ կամ պակաս /մլրդ դրամ/
		2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.		2013թ.	2014թ.	
1.	Հացահատիկ	42381	43916	30.8	30.9	130582	120601	-9981	16.9	15.6	-1.3
2.	Կարտոֆիլ	4219	4267	250	218	105517	106861	+1344	12.6	16	+3.4
3.	Բանջարեղեն	1634	1696	276	306.	45141	52790	+7649	4.5	5.27	+0.77
4.	Պտուղ	485	485	157.8	185	7732	9000	+1268	0.7	1.8	+1.1

6.	Խոտ					123253	125000	+1747	3.6	6.2	+2.6
7.	Այլ		-	-	-	-	-	-	16.85	8.13	
Ընդամենը			-	-	-	-	-	-	55.15	56.0	+4.85

2015թ. բերքի տակ ցանվել է 26545հա աշնանացան ցորեն, կատարվել է ցրտահերկ 13665հա: Աշնանացանի ցանքատարածությունների վիճակի ուսումնասիրությունից պարզվել է, որ վիճակը բարվոք է և 2015թ. կարելի է ակնկալել բարձր բերք: Բուսաբուծության բնագավառում ստացված արտադրանքի իրացման Բուսաբուծության բնագավառում ստացված արտադրանքի իրացման արդյունքում 2014թ. ստացված եկամուտը կազմում է շուրջ **55.3 մլրդ դրամ**, նախորդ տարվա **55.15 մլրդ դրամի** դիմաց:

Սերմացուների բաշխման եւ վերադարձելիության ամփոփում.

«Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիր».

2011-2012թ. Էլիտային վերարտադրություն.

ՀՀ Կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 297-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով» 2014 թվականին ՀՀ Շիրակի մարզի 7 եւ ավելի հեկտար հողատարածք ունեցող շահառուների հայտերը ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարություն.

2014թ.

սերմացու 120.05 տ
շահառու 35
հողատարածք 400.17հա

2013թ.

սերմացու 120.15տ
շահառու 38
հողատարածք 400.5հա

2014թ. Էլիտային վերարտադրությունից ստացված առաջին վերարտադրության ցորենի սերմացուի հետվերադարձն ամբողջությամբ իրականացված է:

2014. առաջին վերարտադրություն.

ՀՀ Կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 297-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով» 2014 թվականին ՀՀ Շիրակի մարզի 0.4-3հա հողատարածք ունեցող գյուղացիական տնտեսություններին հատկացվել է.

սերմացու 1900 տոննա
համայնք 68
հողատարածք 6333 հա

Հայաստանի Հանրապետության 2014 թվականի զարնանացանի համար իրականացված աջակցության ծրագրեր.

Գարնանացան գարու սերմ 57,878 տ, 290հա, 154 շահառու
Կորնզանի սերմ 45.7 տ , 305հա, 267 շահառու
Առվույտի սերմ 7.223 տ, 289 հա, 307 շահառու
Եգիպտացորենի սերմ 0.995 տ, 40 հա, 28 շահառու

Վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի, և առվույտի սերմացուների բաշխում.

Գարնանացան գարու սերմ 569.822 տ, 2849հա,
Առվույտի սերմ 49.807 տ, 1992 հա,

Եզիպտացորենի սերմ

12.255 տ, 490 հա,

«ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 4888.05տ ազոտական պարարտանյութ, որի գումարը կազմում է 586,566 մլն դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 195.522 մլն դրամ:

ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վեռալանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 3438364 լիտր դիզելային վառելանյութ, որի գումարը կազմում է 1203.4274 մլն դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 302.576 մլն դրամ:

«ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 92.85տ կալիումական և 92.1տ ֆոսֆորական պարարտանյութ, որի ընդհանուր գումարը կազմում է 25.89 մլն դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 7.398 մլն դրամ:

Նոր գյուղատնտեսական տեխնիկայի ներկրում. Գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները.

2014թ. գյուղատնտեսական տեխնիկայի առկայության, տեխնիկական վիճակի և տեխնիկայով գյուղացիական տնտեսությունների ապահովվածության մակարդակը.

/h	Տեխնիկայի անվանումը	2014թ.		
		Առկա քանակը /միավոր/	Սարքինության մակարդակը /%/	100 տնտեսությունը հաշվով ապահով. /%/
1.	Տրակտորներ	1647	73.4	4.9
2.	Բեռնատար ավտոմեքենա	1296	74.3	3.8
3.	Հացահատիկահավաք կոմբայններ	324	65.4	0.93
4.	Կցասայլեր	806	85.7	2.4
5.	Խոտհնձիչներ	197	83.8	0.54
6.	Կերահավաք կոմբայններ	78	51.3	0.18
7.	Հատիկագտիչ մեքենաներ	62	80.6	0.17
8.	Շարքացաններ	389	84.8	1.07
9.	Գութաններ	549	98.4	1.6
10.	Կուլտիվատորներ	445	77.5	1.1
11.	Հավաքիչ-մամլիչ	224	81.3	0.48

2014թ. «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում մարզի 7 համայնքներ ձեռք են բերել գյուղատնտեսական տեխնիկա և գյուղ. գործիքներ՝

- Բենիամին – 1 հատ USQ_82 տրակտոր,
- Արևշատ – 2 հատ անիվավոր տրակտոր և գյուղ. գործիքներ,
- Սարալանջ- 2 հատ անիվավոր տրակտոր,
- Նահապետավան – 2 հատ անիվավոր տրակտոր,
- Ծաղկուտ – 2 հատ անիվավոր տրակտոր,

Հոռոմ– 1 հատ անիվավոր տրակտոր,

Գուսաննա T-150 շիտ:

Հակակարկտային միջոցառումներ. 2014թ. կարկտահարության պատճառով տուժել են մարզի 37 թվով համայնքների գյուղացիական տնտեսությունների գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 50%-ից մինչև 100% 11500 հա, վնասի չափը կազմել է 3.359572մլրդ դրամ, նախորդ տարվա 487.0մլն դրամի դիմաց:

Մարզում 2014թ. ընթացքում **համայնքների եւ դոնոր կազմակերպությունների միջոցներով** տեղադրվել են 12 հակակարկտային կայանքներ՝ Բագրավան-2, Ադին-1, Շիրակավան-1, Արեվիկ-2, Փանիկ-2, Վահրամաբերդ-2, Հայկավան-1, Ախուրյան-1 տրիո:

Այժմ մարզի 23 համայնքներում տեղադրված են ընդհանուր թվով 56հակակարկտային կայանքներ:

Ոռոգում.

2014թ. տեղումների քանակը միջին նորմային մոտ էր, ինչպես նախորդ տարի, այնպես էլ այս տարի ոռոգման ջրի մատակարարման հարցում <<Շիրակ>> ՋՕԸ-ի կողմից խնդիրներ չեն առաջացել, ոռոգման ջրի մատակարարումը սպառողներին իրականացվել է ժամանակին ու անկորուստ: 2014թ. ոռոգման սեզոնի ընթացքում համայնքների ղեկավարների կողմից ոչ մի ահազանգ չի ստացվել ջրի ծավալի, մատակարարման ժամկետի ու գրաֆիկի խախտման վերաբերյալ:

<<Շիրակ>> ՋՕԸ-ի 2013-2014թթ. ջրառը, ջրտուքը և գանձումները 17.12.2012թ. դրությամբ հետևյալն են.

«Շիրակ» ՋՕԸ	Ստացված ջուրը հազ. մ ³		Հատույթը հազ. դրամ		Գանձված է հազ. դրամ		Պարտքը հազ. դրամ		Գանձման %-ը	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
Ընդամենը՝	10781	9889	118591	108779	110846.5	101803.5	7745	6975	93.5	93.6

Ընդհանուր վճարումների տոկոսը կազմում է 93.6% նախորդ տարվա 93.5%-ի դիմաց: 2014թ. ջրառից ստացվել է 19390.2 հազ. մ³ ջուր, նախորդ տարվա 22853.1հազ. մ³ ջրի դիմաց:

Ջրամբարների լցվածությունը 16.12.2014թ. դրությամբ՝

h/h	Ջրամբարի անվանումը	Ծավալը մլն մ ³	Լցվածությունը առ 16.12.2013թ. մլն մ ³	Լցվածությունը առ 16.12.2014թ. մլն մ ³
1	Արփի լիճ	105,0	11.0	8.5
2	Կառնուտ	22,6	7.5	4.3
3	Սառնաղբյուր	4,8	0.30	0.31
4	Վարդաքար	5,0	0.2	0.46
5	Թավշուտ	6,0	0.75	0.57
6	Մանթաշ	8,2	1.25	1.16
7	Ջաջուռ		0.16	0.16
ԸՆԴԱՄԵՆԸ՝		151,6		

«Շիրակ» ՋՕԸ-ի կողմից 2014թ. իրականացվել են ոռոգման նախապատրաստական աշխատանքներ՝

1. Ոռոգման ցանցի մաքրում-34.74 մլն դրամ,
2. Ոռոգման ցանցի վերանորոգում - 3.26 մլն դրամ,
3. Հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգում- 9.85մլն դրամ,
4. Պոմպակայանների նորոգում – 3.26 մլն դրամ

5. Մեքենամեխանիզմների նորոգում -7.08մլն դրամ

Անասնապահություն.

Հունվարի 1-17-ը անցկացվել է գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառում, որի արդյունքները ամփոփ տեսքով բերվում է ստորև ներկայացվող աղյուսակում /2013-2014թթ. արդյունքների համեմատականով/.

	Խ.ե.կ. /հազ. գլուխ/		Որից՝ կովեր /հազ. գլուխ/		Խոզեր /հազ. գլուխ/		Ոչխարներ եւ այծեր /հազ. գլուխ/		Թռչուններ /հազ. թև/	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
	105.7	107.97	50.1	50.5	15.7	13.8	86.4	90.4	206.4	188.8
աճ/պակաս /+/-/		+2.27		+0.4		-1.9		+4.0		-17.6

ՀՀ Շիրակի մարզում անասնաբուժական հիմնական մթերքների արտադրության 2013-2014թթ. համեմատական ցուցանիշները.

Անասնաբուժական մթերք	2013թ. համախառն արտադրանքը	2014թ. համախառն արտադրանքը	Համախառն արտադրանքի աճ կամ նվազում	2013թ. գումարը / մլրդ դրամ/	2014թ. գումարը /մլրդ դրամ/
Միս /հազ. տ/	21.4	21.9	+0.5	42	43.6
Կաթ /հազ. տ/	107.6	114.0	+6.4	7.25	8.2
Ձու /մլն հատ/	40.1	46.5	+6.4	1.7	1.8
Ընդամենը				50.95	53.6

Անասնապահական մթերքների իրացումից ստացված համախառն եկամուտը կազմել է **53.6** մլրդ դրամ /նախորդ տարվա **50.95 մլրդ դրամի** դիմաց/:

Այսպիսով բուսաբուժական և անասնապահական մթերքների իրացումից ստացված համախառն ներքին արդյունքը կազմել է **108.9 մլրդ դրամ**, նախորդ տարվա **106.1 մլրդ դրամի** դիմաց:

Մարզը, գտնվելով Թուրքիայի և Վրաստանի հանրապետությունների հարևանությամբ, մշտապես ենթակա է կենդանիների և մարդկանց համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների ներթափանցման վտանգին:

Հանրապետությունում գործող կարգի համաձայն անասնաբուժական սպասարկման միջոցառումներ են իրականացվել 10 հիվանդությունների նկատմամբ, ինչպես նաև իրականացվել են ախտորոշիչ հետազոտություններ:

Մարզի 119 համայնքներում անասնաբուժական ծառայություններ են մատուցում 82 անասնաբույժներ, որի իրականացումը 2014թ. կատարվել է ամբողջությամբ, առանց բացթողումների, համապատասխան պլան-գրաֆիկի: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության եւ բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային կենտրոնի

Եւ մարզպետարանի կողմից մարզի թվով 15 համայնքներում տարվա ընթացքում ուսումնասիրվել են գյուղատնտեսական կենդանիների կայուն հակահամաճարակային իրավիճակի ապահովմանն ուղղված միջոցառումների, համայնքների անասնաբույժների կողմից պատվիրակված լիազորությունների արդյունավետ իրականացման աշխատանքները, որի արդյունքում 2014թ. ընթացքում համաճարակների բռնկումներ չեն արձանագրվել:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2014թ. ընթացքում <<ՀՀ Շիրակի մարզի անտառների վերականգնման համալիր ծրագրերի>> շրջանակներում Գյումրու անտառտնտեսության Վարդադրյուրի տեղամասում 10 հա տարածքի վրա ստեղծվել է նոր անտառազանգված: Շարունակվել է նաև համագործակցությունը <<Էյ-Թի-ՓԻ>> բարեգործական հիմնադրամի հետ կանաչ տարածքների ընդլայնման և համայնքային անտառների ստեղծման ուղղությամբ: Այդ շրջանակներում Բասեն, Սարատակ, Սարալանջ և Գետափ համայնքներում հիմնվել է ընդհանուր հաշվով 7.6 հա համայնքային անտառ: Բացի այդ մարզի թվով 7 համայնքներին հատկացվել է շուրջ 1400 տնկիներ, ինչպես նաև հիմնադրամի կողմից իրականացվել են Երևան-Գյումրի մայրուղու Ագատան-Գյումրի հատվածի և Արթիկ-Նոր Կյանք ճանապարհահատվածի ճանապարհամերձ ծառուղիների սանիտարական մաքրման և ծառերի էտման աշխատանքներ, որի արդյունքում ստացված վառելիքայտը հատկացվել է Գյումրի, Ագատան և Արթիկ համայնքների սոցիալապես անապահով բնակչությանը:

2014թ. գարնանային ծառատունկի շրջանակներում մարզի քաղաքային և գյուղական համայնքներում իրականացվել են լայնածավալ կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ, որի ընթացքում տնկվել է ավելի քան 50000 ծառ և թուփ:

Շիրակի մարզի համայնքների ընդհանուր օգտագործման տարածքներում՝ փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում, արտադրական, գիտակրթական և մշակութային օբյեկտներին հարող և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներում շրջակա միջավայրի բարելավման նպատակով 2014թ. ապրիլի 1-ից մայիսի 1-ը Շիրակի մարզպետի 31.03.2014թ. թիվ 116/2782-14 հանձնարարականով հայտարարվել և անց է կացվել սանիտարական մաքրման, կանաչ տարածքների ընդլայնման և բարեկարգման միամսյակ: Միամսյակի շրջանակներում մարզի ողջ տարածքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել և լիկվիդացվել են մի շարք չարտոնագրված աղբավայրեր: Իրականացված աշխատանքների արդյունքում զգալիորեն բարելավվել է կոմունալ տնտեսության և սանիտարական մաքրման վիճակը համայնքների, ինչպես նաև միջպետական և միջհամայնքային ճանապարհներին հարող տարածքներում:

Շիրակի մարզի ջրհավաք ավազաններից անթրոպոգեն բացասական ներգործության առավել ենթակա է Մանթաշ գետի ջրհավաք ավազանը, քանի որ այստեղ են գտնվում բազմաթիվ հեռագնա արոտավայրեր՝ մեծ քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների մշտական առկայությամբ: Ջրհավաք ավազանի նշանակությունը առավել կարևորվում է, քանի որ այն հանդիսանում է նաև Արթիկ քաղաքի և տարածաշրջանի համայնքների խմելու ջրով մատակարարման աղբյուր: Նշված բացասական ներգործությունը նվազագույնի հասցնելու, ինչպես նաև արոտավայրերի օգտագործումը կանոնակարգելու նպատակով 2014թ. մարտ ամսին Շիրակի մարզպետարանի կողմից մշակվել և ՀՀ բնապահպանության նախարարություն է ներկայացվել նշված ավազանին բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ շնորհելու առաջարկություն: Միաժամանակ նախարարություն է ներկայացվել նաև նախագիծ վերը նշված ծրագրի իրականացումը միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառելու համար:

2014թ. ընթացքում մասնակցություն է ցուցաբերվել <<Հայրավարչության>> Շիրակի տարածքային՝ Ախուրյանի, Արթիկի և Անիի ստորաբաժանումների, ինչպես նաև <<Արփի լիճ>>

ազգային պարկի պահպանության ծառայության կողմից կազմակերպված ստուգայցերին, որոնց ընթացքում որսագողության ակնառու դեպքեր չեն արձանագրվել, բնակչության շրջանում կատարվել է բացատրական աշխատանք, նախազգուշացվել են մի խումբ անհատ քաղաքացիներ:

Բնապահպանական պետական տեսչության Շիրակի մարզային բաժնի հետ կատարված ստուգայցերի արդյունքում արձանագրվել է խեցգետնի ապօրինի որսի, վառելափայտի ապօրինի տեղափոխման և ծառի հատման դեպքեր, որոնց իրականացնողների նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ՝ 350000 դրամ ընդհանուր գումարով:

ՀՀ Շիրակի մարզի տարածքում հողի բերրի շերտի կուտակումներ առկա են հետևյալ համայնքներում՝ Գյումրի-200 հազ. խոր. մ, Մայիսյան-40 հազ. խոր. մ, Գուսանազյուղ-300 հազ. խոր. մետր, Մարմաշեն-50 հազ. խոր. մետր, Աղին-80 հազ. խոր. մետր, որոնք արձանագրված են մարզպետարանի կողմից վարվող գրանցամատյանում: 2014թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Մարմաշեն համայնքի վարչական տարածքում արձանագրվել է հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման երկու դեպք, որոնք իրականացնողների նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ 120000 դրամի չափով:

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության>> ծրագրի շրջանակներում շարունակվում են աշխատանքներ կատարվել Շիրակի մարզի հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: 2014թ. ընթացքում Սարալանջ, Նահապետավան, Արևշատ, Ծաղկուտ համայնքների արոտավայրերում և խոտհարքներում իրականացվել են բարելավման և ջրարբիացման աշխատանքներ, կանոնակարգվել են հեռագնա ալպիական արոտավայրերում արածեցման գործընթացները, որոնց արդյունքում զգալիորեն կրճատվել է լանջային էրոզիան:

<<Արփի լիճ>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի և հարակից համայնքների միջև առկա տարածքային խնդիրների լուծման նպատակով մարզպետի 13.06.2014թ. թիվ 23 կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով, որի կողմից իրականացված աշխատանքների արդյունքում ուսումնասիրվել է ազգային պարկի ընդհանուր տարածքի տարածագործառնական և համայնքների վարչական սահմանների սահմանազատման, <<Արփի լիճ>> ազգային պարկի տնտեսական և արգելոցային գոտիներում նախկինում հողերի վարձակալության համար համայնքների կողմից կնքված պայմանագրերի լուծման և նոր վարձակալության պայմանագրերի կնքման գործընթացի կանոնակարգման հարցերը փոխանցված հողամասերի սահմանների նկարագրությունը, կատարվել են գծանշման և սահմանանիշերի տեղադրման աշխատանքներ, մշակվել է առաջարկությունների փաթեթ, որի իրացման արդյունքում հնարավոր կլինի լուծել առկա տարածքային և ֆինանսատնտեսական տարաձայնությունները:

Տարվա ընթացքում. շարունակվել է համագործակցությունը վտանգավոր թափոնների փոխադրում, վնասազերծում, վերամշակում իրականացնող <<Էկոլոգիա>> ՍՊԸ-ի հետ: Մարզի առողջապահական հաստատություններում գոյացող վտանգավոր բժշկական թափոնները հաշվառվել, դասակարգվել և համապատասխան ակտով հանձնվել են վերը նշված ՍՊԸ-ին՝ յուրաքանչյուր ամիսը երկու անգամ պարբերականությամբ:

Շիրակի մարզում արդյունահանվող օգտակար հանածոները հիմնականում շինանյութերն են՝ տուֆեր, բազալտներ, հրաբխային խարամ և ավազ: 2014թ. ընթացքում շարունակվել է մարզի հանքարդյունաբերության ոլորտում ընդգրկված ձեռնարկությունների և կազմակերպությունների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրությունը՝ ՀՀ <<Ընդերքի մասին>> նոր օրենսգրքի պահանջների համապատասխանության պարզաբանման նպատակով: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 01.10.2014թ. դրությամբ հանքարդյունաբերության իրավունքի փաստաթղթեր ունեն ընդամենը 63 կազմակերպություններ, որոնցից <<Գրիգոր>>, <<Յուտան>> և <<Ծովինար-Լուսին>> ՍՊԸ-երը ընդերքօգտագործման իրավունքի փաստաթղթեր են ստացել 2014թ. ընթացքում: Մարզում գործող ձեռնարկությունների կողմից 2014թ. ընթացքում արդյունահանվել է շուրջ 170 000 տոննա շինանյութ:

2014թ. ընթացքում մարզում որոշակի առաջընթաց է արձանագրվել նաև այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործման բնագավառում: Գյումրիում գործող <<Ֆերթի>> ՀԿ-ի կողմից հիմնվել է <<Կանաչ տեխնոլոգիաների>> կենտրոն մրգային չրերի արտադրության տեխնոլոգիաների մշակման նպատակով: Կենտրոնի կողմից պատրաստվել է Գյումրու թիվ 3 օժանդակ ու թիվ 1 ավագ դպրոցներին են տրամադրվել մրգերի պատրաստման արևային չորանոցներ և ջերմատներ, իսկ Բասեն համայնքում մանկապարտեզի ջերմատան և մրգերի չորացման համար մշակվել է արևային օդատաքացման համակարգ: Բացի այդ հայկական <<Կարիտաս>> բարեսիրական կազմակերպության կողմից կառուցման փուլում է գտնվում նաև հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի <<Էմիլի Արեգակ>> կենտրոնը, որին անհրաժեշտ էլեկտրաէներգիայի և ջեռուցման պահանջարկը մասնակիորեն իրականացվելու է արեգակնային էներգիայի փոխակերպիչների միջոցով:

ՀՈՂԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 159-Ա հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու 2014 թվականի աշխատանքային ծրագրի և ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան որոշումների համաձայն 2014 թվականին նախատեսված ՀՀ Շիրակի մարզի թվով 23 համայնքներից նույնքանում իրականացվել են հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն:

Աշխատանքային խմբերի կողմից վերահսկողության աշխատանքներն իրականացրել են <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 20-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված դրույթների և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի համատեղ հրամաններով հաստատված հարցաշարերին համապատասխան:

Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել են համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, օգտագործման տրամադրման, հողային ֆոնդի նպատակային օգտագործման և վարձավճարների գանձման օրինականությունը, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման վիճակը:

Վերահսկողության արդյունքում կազմված 23 տեղեկանքները քննարկվել են համապատասխան համայնքների ավագանիների նիստերում, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ և հսկողություն իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից առարկություններ չեն ներկայացվել:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմվել և գործողության մեջ են դրվել ժամանակացույցեր, համաձայն որոնց սահմանված ժամկետներում ձեռնարկված միջոցառումների արդյունքում վերացվել են արձանագրված խախտումները:

Վերահսկողության աշխատանքների ընթացքում տեղերում անհրաժեշտ աջակցություն և խորհրդատվություն է կազմակերպվել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հողօգտագործման բնագավառում իրենց լիազորությունների իրականացման հարցերով:

Մարզի համայնքներում իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել է նաև, որ մարզի վարչական սահմաններում գտնվող գեոդեզիական և այլ հատուկ տեղեկատվական նշանները և կետերը խախտված չեն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.5 հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան ուսումնասիրվել են մարզպետարան ստացված հողային հարաբերությունների բնագավառին վերաբերվող համայնքների ավագանիների թվով 92 որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Ուսումնասիրության արդյունքում թվով 33 ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են առարկություններ (տեսակարար կշիռը՝ 35.9 %) և համապատասխան առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին:

Ներկայացված առարկությունները քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, դրանք ընդունվել են ամբողջությամբ և իրավական ակտերը համապատասխանեցվել են ՀՀ հողային օրենսդրության պահանջներին:

2014 թվականի ընթացքում մարզի թվով 18 համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում օտարվել է ընդամենը 8.785 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողեր, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 1.465 հեկտարով: Վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է 33334.0 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 1259.0 հազ. դրամով: Ապահովվել է ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի նկատմամբ 290.4 %-ի մակարդակ: Իսկ ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, օտարվել է 4.701 հա հող՝ 28295.3 հազ. դրամ արժեքով:

2014 թվականի ընթացքում մարզի թվով 13 համայնքներում անցկացված հողերի վարձակալության տրամադրման մրցույթների արդյունքում վարձակալության է տրամադրվել 312.04 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողեր՝ 9391.45 հազ. դրամ վարձավճարով: Ապահովվել է օգտագործման տրամադրված հողամասերի հողի հարկի դրույքաչափի նկատմամբ վարձավճարի 130 տոկոսից բարձր մակարդակ:

Ապահովվել է օտարված և վարձակալության տրամադրված հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցումը:

Հողերի աճուրդների և մրցույթների նախապատրաստման և անցկացված ընթացքում տեղերում անհրաժեշտ մեթոդական և խորհրդական աջակցություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին:

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով կազմվել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացվել գյուղական համայնքների հողերի օգտագործման թվով 5 ժամանակավոր սխեմաներ, որոնցից 3-ի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել են դրական եզրակացություններ, իսկ 2-ի համաձայնեցման աշխատանքներն ընթացքի մեջ են: Ընթացքի մեջ է նաև հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներով հողերի նպատակային նշանակությունը փոխելու համար համայնքների ղեկավարների կողմից ներկայացված ևս 3 հողաշինական գործերի ՀՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրության աշխատանքները:

Կազմվել է մարզի 2014 թվականի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ և սահմանված ժամկետում ներկայացվել է պետական լիազոր մարմին:

Մարզպետարանում ներդրվել է համայնքների հողային հաշվեկշիռների կազմման ավտոմատացված համակարգ, որը հնարավորություն է տալիս համապատասխան հարցումների միջոցով իրականացնել հողային հաշվեկշռի հետ կապված տարբեր տիպի անալիզներ և վերլուծություններ:

Համայնքների ղեկավարներին տրամադրվել են հողերի կադաստրային քարտեզների էլեկտրոնային տարբերակները և ըստ անհրաժեշտության համայնքների ղեկավարների հետ համատեղ տեղերում կազմակերպվել են վարչական սահմանների ճշգրտման աշխատանքներ:

Ամենօրյա աշխատանքներ են տարվել հողի վարձակալական վճարների հավաքագրումն ապահովելու ուղղությամբ: Մարզի համայնքների բյուջեների եկամուտներում նախատեսված հողի վաճակալական վճարների հավաքագրման մակարդակը 2014 թվականի դեկտեմբերի 18-ի դրությամբ կազմել է 78%, կամ նախատեսվածից պակաս է հավաքագրվել 63668.2 հազ. դրամ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ թվով 33 բուժհաստատություն, որից՝ հիվանդանոց - 2, պոլիկլինիկա - 5, ընտանեկան բժշկության կենտրոն-1, ծննդատուն - 2, դիսպանսեր - 1, բժշկական կենտրոն - 3, վերականգնողական կենտրոն-1, գյուղական բժշկական ամբուլատորիաներ - 6, գյուղական առողջության կենտրոններ - 9, շտապ բուժօգնության կայան - 1, արյան փոխներարկման կայան - 1, պաթոլոգո-անատոմիական լաբորատորիա - 1 :

Գյուղական բժշկական ամբուլատորիաներին ամրակցված են 119 բուժակ-մանկաբարձական կետեր:

Մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ 2014թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ հաճախումների թիվը կազմել է 522555, պետպատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունների ծավալը կազմում է 3մլրդ. 464մլն.422 հազ.դրամ, մատուցված վճարովի ծառայությունների ծավալը 580մլն. 372 հազ.դրամ:

ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ թվով 118 հիվանդներ, որոնք ընդգրկված չեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման առանձին /հատուկ/ խմբերում, սակայն գտնվում են սոցիալական խիստ ծանր պայմաններում, ստացել են անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն:

2014թ-ի մարտ-ապրիլ ամիսներին կանանց միամսյակի կապակցությամբ կազմակերպվել է «բաց դռների օր», Երևանի բժշկական կազմակերպությունների բժիշկ մասնագետների մասնակցությամբ, որի ընթացքում հետազոտվել և բուժում են ստացել ՀՀ Շիրակի մարզի 1800 կին ազգաբնակչություն:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում պարբերաբար կազմակերպվել է «բաց դռների օրեր»՝ Երևանի տարբեր բժշկական կազմակերպությունների բժիշկ մասնագետների մասնակցությամբ:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում նորագույն բժշկական սարքավորումները հնարավորություն ստեղծեցին մարզի բնակչությանը ստանալու որակյալ բժշկական օգնություն և սպասարկում: 2014թ-ի մայիս ամսից հիմնական դրույքաչափով աշխատանքի է ընդունվել ինվազիվ սրտաբան, որն իրականացնում է կորոնարոանգիոգրաֆիա և սրտի ստենդավորում:

Հիմնովին վերանորոգվել է «Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի մասնաշենքը:

Ընթացքի մեջ է «Պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ-ի շենքի կառուցման շինարարական աշխատանքները:

Առողջապահության նախարարությունից 2014թ. ընթացքում կենտրոնացված կարգով և մարդասիրական ճանապարհով ստացվել է 199մլն 974հազ 400 դրամի դեղորայք և բժշկական պարագաներ:

2014թ. ընթացքում «Ջերմուկ», «Արզնի», «Գանձաղբյուր», «Վանաձոր» առողջարանների ուղեգրեր են տրամադրվել մարզի 99 հաշմանդամների:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին զգալի աշխատանքներ են իրականացվել սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում պետական նպաստների նշանակման ու վճարման գործընթացի բարելավման, ընտանեկան, սոցիալական նպաստների հասցեականության բարձրացման ուղղությամբ:

Տարվա ընթացքում իրականացվել են հարակից բազաներից ստացվող տեղեկատվությունների և տեղական տեղեկատվական բազաների համադրման, մասնագետների տնային այցելությունների միջոցով ընտանիքների սոցիալական վիճակի ուսումնասիրությունների գործառույթներ, որոնք որոշակիորեն նպաստել են ընտանեկան նպաստների հասցեականության բարձրացմանը:

Տեղեկատվություն

ՄՕՏ մարմիններում հաշվառված և նպաստ ստացող ընտանիքների վերաբերյալ

ՄՕՏՍ անվանումը, փաստագրված ընտանիքների թիվը		Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներ			
ՄՕՏՍ անվանումը	Փաստագրված ընտանիքների թիվը	01.12.2013թ. դրությամբ		01.12.2014թ.դրությամբ	
		ընտանիք	Գումար /հազ.դրամ/	ընտանիք	Գումար /հազ.դրամ/
Արթիկի ՄՕՏԳ	3291	2540	70500.0	2557	73482.0
Ախուրյանի ՄՕՏԳ	2022	1361	38472.0	1384	40897.0
Մարալիկի ՄՕՏԳ	1310	955	27268.0	977	28452.0
Ամասիաի ՄՕՏԳ	220	159	4425.0	160	4655.5
Աշոցքի ՄՕՏԳ	357	221	6447.0	224	6833.0
Գյումրի-1 ՄՕՏԲ	5328	4267	107149.0	4390	115415.0
Գյումրի-2 ՄՕՏԲ	6626	5482	139669.5	5518	146978.0
Շիրակի մարզ	19154	14985	393930.0	15210	416712.5

Որոշակի աշխատանքներ են իրականացվել մարզի բնակչության զբաղվածության և գործազուրկների հաշվառման ուղղությամբ տարածքային կենտրոնների գործունեությանը աջակցելու, նոր աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ձեռնարկումներին նպաստելու ուղղությամբ:

2014 թվականի դեկտեմբերի ամսվա դրությամբ մարզում գրանցված են եղել 11382 աշխատանք փնտրողներ, որոնցից գործազուրկի կարգավիճակ ունեն 10109-ը: Աշխատանքի է տեղավորվել 859 մարդ:

ԶՏԿ	Աշխատանք փնտրող		Գործազուրկներ		Աշխատանքի տեղավորվածներ	
	ընդամենը	կանայք	ընդամենը	կանայք	ընդամենը	կանայք
Գյումրի	9495	6957	8629	6414	738	423
Արթիկ	993	668	710	510	51	34
Մարալիկ	412	268	329	229	35	26
Ամասիա	122	93	112	85	16	14
Աշոցք	360	234	329	222	19	13
Մարզով	11382	8220	10109	7460	859	510

Աշխատանքներ են տարվել հաշմանդամների զբաղվածության ապահովման ուղղությամբ: Զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված 569 հաշմանդամներից 87-ը ընդգրկվել են զբաղվածության պետական ծրագրերում, որից 50-ը սեզոնային զբաղվածության ծրագրում:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակական կազմակերպությունները իրականացրել են համատեղ աշխատանքներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանություն իրականացնելուն և նրանց հասարակության մեջ ներառելուն: Աջակցություն է ցուցաբերվել հաշմանդամներին վերականգնողական տեխնիկական պարագաներով ապահովման ուղղությամբ:

Մարզի համայնքերում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց 2014 թվականի ընթացքում մարզպետարանի աջակցությամբ և ՀՀ ԱՍՀ նախարարության հետ համագործակցությամբ Գյումրու «Հաշմանդամների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը տրամադրել է 27 սայլակ, 19 լսողական ապարատ, 6 քայլակ, 3 հենակներ: Թվով 100 հաշմանդամներ վերականգնողական և օժանդակ տեխնիկական այլ պարագաներ են ստացել նաև Գյումրու ինտեքորթոպրոտեզավորման կենտրոնից:

Թվով 50 հաշմանդամներ են ընդգրկվել «Հայկական Կարիտաս» կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնում, իսկ 140-ը խնամք են ստանում տնային պայմաններում: Շուրջ 550 սոցիալապես անապահով քաղաքացիներ և հաշմանդամներ ընդգրկված են «Տիրամայր Հայաստանի Կուսաստան», «ՄՊՖԱ», «Հայ Ավետարանական Մկրտական Եկեղեցի» և Գյումրի և Արթիկ քաղաքներում «Առաքելություն Հայաստան» կազմակերպությունների միջոցով գործող անվճար ճաշարաններում:

Թվով 40 բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաներ ընդգրկված են «Հայկական Կարիտաս» բարեգործական կազմակերպության «Արեգակ» ցերեկային խնամքի կենտրոնում:

Աշխատանքներ են իրականացվել մարզի տարածքում սոցիալական ենթակառուցվածքի շենքերի ու շինությունների բնակչության սակավաշարժուն խմբերի համար մատչելիություն ապահովելու ուղղությամբ:

2014 թվականին մարզի տարածքում հաշմանդամների համար հարմարեցվել են ընդհանուր թվով 6 շենքեր, որից՝ 2-ը կրթության / Աշոցքի և Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոցները/, 2-ը մշակույթի /Գյումրու՝ Վարդուհի՝ արվեստի դպրոցը, Ամասիայի մշակույթի կենտրոնը/, 1-ը առողջապահական, /«Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ն / և 1-ը բազմաբնակարան /Աշոցքում բնակելի շենք/:

ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հրատապ դրամական օգնություն է ցուցաբերվել թվով 763 Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին, թիկունքում աշխատած ու պատերազմի մասնակիցներին հավասարեցված կանանց, զոհված ազատամարտիկների և մարտական գործողությունների մասնակցած ազատամարտիկների, յոթ և ավելի երեխա ունեցող ընտանիքների և սոցիալապես կարիքավոր քաղաքացիների:

ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 330 որոշման համաձայն ներկայումս որպես բնակարանի կարիքավոր հաշվառված են մարզի համայնքներում բնակվող 44 փախստական ընտանիքներ:

Կարևորվել է մարզում իրականացվող սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը, պետական նպաստների համակարգի, հաշմանդամների հիմնախնդիրների, սոցիալական պաշտպանության ոլորտի այլ իրավական ակտերի լուսաբանումը:

Երեխաների իրավունքների պաշտպանություն

Մարզում գործող ՀՀ սոցապ նախարարության համակարգի 2 և բարեգործական 1 գիշերօթիկ խնամքի հաստատություններում խնամվում է 245 երեխա /Գյումրիի թիվ 1 - 101, Գյումրիի թիվ 2 - 79, «Թռչունյան տուն» - 65/:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի մասին վկայագրեր են տրվել մարզի 6 ներառական և 2 հատուկ դպրոցների 181 աշակերտի:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2014թ. մարզում իրականացվել հետևյալ աշխատանքները.

2014թ ապրիլի 7-ից մինչև 2015թ ապրիլի 7-ը ՀՀ կառավարությունը հայտարարել է «Ընտանիքի տարի»>>: Այդ կապակցությամբ ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 16.04.14թ թիվ 76-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում մարզում իրականացվել են Ընտանիքի տարվան նվիրված բազմաթիվ միջոցառումներ, մարզի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից ընտանիք է վերադարձել 80 երեխա, կանխարգելվել է 25 երեխայի մուտքը հաստատություններ:

Ավելացել է ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների թիվը՝ 15 հանրակրթական և 2 հատուկ դպրոց: 2014թ-ին վկայագիր է տրվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 318 երեխայի:

Իրականացվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության >> և «Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման»>> ծրագրերի մարզային միջոցառումները:

Կազմակերպվել է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 2600 երեխայի ամառային անվճար հանգիստը:

Բարելավվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների շենքային պայմանները, ապահովվել նյութատեխնիկական հագեցվածությունը՝ ստեղծելով ընտանեկանին ավելի մոտ միջավայր:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են 168 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնցից 151-ը՝ մարզպետարանի 17-ը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության:

Դպրոցներից 55-ը գործում են մարզի 3 քաղաքներում, 113-ը՝ 112 գյուղերում:

Հանրակրթական դպրոցներից 30-ը գործում են բարձր լեռնային, 44-ը՝ լեռնային, 13-ը՝ սահմանամերձ բնակավայրերում:

Կրթության որակի և մատչելիության բարձրացումն ապահովելու նպատակով 2014 թվականին ընդհանուր առմամբ շարունակվել են հանրակրթական համակարգում իրականացվող բարեփոխումները, ընդլայնվել է նախադպրոցական կրթության հասանելիությունը մարզի գյուղական համայնքներում, ապահովվել է վարչական աշխատողների և պարտադիր ատեստավորման նպատակով ուսուցիչների վերապատրաստումների իրականացումը, շարունակվել են ուսուցիչների որակավորման տարակարգի շնորհման գործընթացները: 5 ուսուցչի շնորհվել է որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

2014 թվականի ընթացքում մարզի հանրակրթական դպրոցների 3200 աշակերտներ մասնակցել են հանրապետական առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին, որի արդյունքներով 1040

աշակերտներ անցել են մարզային փուլ և նրանցից 160-ը դարձել են օլիմպիադաների հանրապետական փուլերի մասնակիցներ՝ ձեռք բերելով չորս 1-ին, տասը 2-րդ և տասնհինգ 3-րդ կարգի դիպլոմներ:

2014 թվականին շարունակվել են ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի համալրման, նորագույն տեխնոլոգիաների ներդրման աշխատանքները, գյուղական համայնքների դպրոցահասակ երեխաների երթևեկության կազմակերպումը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար մարզի ուսումնական հաստատություններում ընթացել են կենսագործունեության համապատասխան միջավայրի, անհրաժեշտ պայմանների ստեղծման և մասնագիտացված մանկավարժական համակազմի պատրաստման աշխատանքներ, ավելացել է ներառական կրթություն իրականացնող դպրոցների քանակը:

2014 թվականին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ներառական կրթություն է իրականացվել մարզի 12 հանրակրթական դպրոցներում՝ 371 աշակերտի համար և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից այդ նպատակով ուսումնական հաստատություններին հատկացվել է 147.866.6 հազ. դրամ: Ներառական կրթության որակի բարձրացման նպատակով 148 մանկավարժներ անցել են համապատասխան մասնագիտական վերապատրաստում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար նախատեսված կրթական ծրագրեր իրականացնում են նաև մարզի երկու հատուկ դպրոցները՝ Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ /օժանդակ/ դպրոցը և Արթիկի թիվ 1 հատուկ դպրոցը: Այդ դպրոցներում ընդգրկված են 124 երեխաներ:

Մարզում գործում են 46 համայնքային նախակրթարաններ, որտեղ հաճախում են 3936 երեխաներ: 2014 թվականի մայիս-հունիս ամիսներին մասնագիտական վերապատրաստում են ստացել նախակրթարանների 145 դաստիարակ-մանկավարժներ:

Նախադպրոցական կրթության բնագավառում «Օգնություն նախադպրոցական տարիքի երեխաներին» ծրագրով իրականացվում է մարզի հանրակրթական դպրոցներում գործող 54 նախակրթարանների գործունեությունը, այստեղ հաճախում են 887 երեխա: 2014 թվականին պետական բյուջեից ուսումնական հաստատություններին այդ նպատակով հատկացվել է 129.168.3 հազ. դրամ: Անհրաժեշտ է նշել, որ 54 դպրոցներից 11-ը սկսած 2014 թվականի սեպտեմբերից՝ համաձայն ծրագրի, ֆինանսավորվում են պետական միջոցների հաշվին:

2014 թվականի շարունակվել է մարզի հանրակրթական դպրոցներում սովորող սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների 7-14 տարեկան 525 երեխաների ամառային հանգստի կազմակերպումը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավանի «Արագած» ճամբարում /1-ին, 2-րդ և 3-րդ հերթափոխներ/:

Անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել մանկավարժների համար կազմակերպված վերապատրաստումների անցկացման աշխատանքներին: Իրականացված վերապատրաստումներին մասնակցել են մարզի դպրոցների 34 փոխտնօրեններ ինչպես նաև ներառական կրթություն - 148, նախատեսատեսացիոն պատրաստություն - 673 ուսուցիչներ՝ 18 առարկաների գծով և համայնքային մանկապարտեզների 145 դաստիարակ-մանկավարժներ: Վերապատրաստումներին մասնակցել են մարզի պետական հանրակրթական դպրոցների 263 ուսուցիչներ՝ 10 առարկաների գծով /նախատեսատեսացիոն վերապատրաստում/: Եվս 30 ուսուցիչներ վերապատրաստվել են «Վորլդ Վիժն» ՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներում: Ընդհանուր առմամբ վերապատրաստված մանկավարժների թիվը մարզում հասնում է 1293-ի: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների 2014 թվականին ատեստավորման ենթակա 569 ուսուցիչների հայտերի ընդունման և ըստ առարկաների դասակարգման աշխատանքները:

Մարզի գրեթե բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում ստեղծվել են սահմանված պահանջներին համապատասխանող զենք, զինամթերքի պահեստ-պահարաններ, որոնք համալրվել են ուսումնական զենք, զինամթերքով: Մի քանի դպրոցներում հնարավոր չէ պահանջված պայմաններն

ապահովող պահեստ-պահարանների կառուցումը, որովհետև դպրոցական շենքերը արտասահմանյան կառույցներ են և չեն բավարարում պահանջվող չափանիշներին:

2014 թվականի ընթացքում մարզի հանրակրթական դպրոցներում հայտարարվել և անցկացվել է հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի 54 մրցույթ: Մրցույթների անցկացման մասին ուսումնական հաստատությունների խորհրդների կողմից ընդունված որոշման քաղվածքները և հայտարարությունները սահմանված կարգի համաձայն սահմանված ժամկետներում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը, հրապարակվել են azdarar.am, edu.am, shirak.gov.am էլեկտրոնային կայք-էջերում և տեղական ՋԼՄ-ներով: Այս գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի համապատասխան որոշումներով մարզային ենթակայության դպրոցների գործադիր մարմինների պաշտոններում նշանակվել են 54 տնօրեններ կամ տնօրենի պաշտոնակատարներ:

2014թ արձանագրել են մանկավարժական տարբեր մասնագիտությունների գծով ուսուցիչների մոտ 240 թափուր աշխատատեղ, որոնց համալրման նպատակով դպրոցները «Կրթություն» շաբաթաթերթում, տեղական հեռուստատեսությամբ /ՌՅայգՈ, ՈՇանթՈ/ և մարզպետարանի ինտերնետային կայք էջում /shirak.gov.am/ տարվա ընթացքում պարբերաբար մրցույթներ են հայտարարել. թափուր մնացած աշխատատեղերը զբաղեցված են ժամանակավոր փոխարինողների կողմից՝ մինչև մրցույթով համապատասխան ուսուցչի նշանակումը:

Կրթության պետական չափորոշիչով սահմանված ՈՀանրակրթական ուսուցում, ՈՀատուկ ընդհանուր կրթություն, Սարտադպրոցական դաստիարակություն, Սերառական կրթություն, Երեկոյան կրթություն ծրագրերի տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության բաղադրիչները ֆինանսավորվել են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և իրականացվել են ամբողջությամբ:

2014 թվականին մարզի համայնքների ղեկավարների և հանրակրթական դպրոցների կողմից համակարգվել և վերահսկվել են դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, վերահսկվել է դպրոցից-դպրոց տեղափոխվող աշակերտների շարժը, կազմվել են 2014-2015, 2015-2016, 2016-2017 ուսումնական տարիների նախնական կոմպլեկտավորումները և ներկայացվել ՀՀ ԿԳ նախարարություն՝ սահմանված կարգի համաձայն: Կազմվել են 2014-2015 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի, 2015-2016 ուսումնական տարվա աշակերտական համակազմի նախնական կոմպլեկտավորումները և ներկայացվել աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հունվարի 21-ի թիվ 37 Ա/Ք հրամանով հաստատված ՈՀանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների կարգը-ը ներդնելու նպատակով մարզի ավելի քան 30 պետական հանրակրթական դպրոցներում ուսումնասիրվել է գնահատման կարգի նորամուծությունների ներդրման նպատակահարմարությունները:

Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գնահատման և թեստավորման կենտրոնից /ԳԹԿ/ հանրակրթական դպրոցների շրջանավարտներին հատկացված ավարտական և միասնական քննությունների ուղեցույցների ստացումը և բաշխումը:

ԳԹԿ է ներկայացվել մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 2014 թվականի շրջանավարտների ավարտական քննությունների ցուցակ-հայտերը:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2013-2014 ուստարվա շրջանավարտների միջնակարգ կրթության ատեստատների, հիմնական կրթության վկայականների հայտերը: Սահմանված կարգով կազմակերպվել է ավարտական փաստաթղթերի ստացման և բաշխման գործընթացը: Ուսումնասիրվել և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին է ներկայացվել

նաև մարզի տարբեր դպրոցների նախորդ տարիների շրջանավարտներին միջնակարգ կամ հիմնական կրթության վկայականների կրկնօրինակների տրամադրման 100 դիմում-հայտ:

Մարզի 2 համայնքներում և 3 բնակավայրերում դպրոցահասակ տարիքի սակավաթիվ երեխաներ ունենալու պատճառով դպրոցներ չեն գործում: Աշակերտների համայնքից համայնք երթևեկության կազմակերպման խնդիրը լուծելու նպատակով ներդրված ծրագրի շրջանակներում 2014 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներով կազմակերպվել է 11 համայնքների 144 երեխաների տեղափոխումը: Նշված ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից այդ նպատակով մարզի համապատասխան ուսումնական հաստատություններին հատկացվել է 10.850.8 հազ. դրամ:

Մարզի հանրակրթական դպրոցների շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով 2014 թվականի 2-րդ կիսամյակի մեկնարկին շահագործման է հանձնվել Աշոցքի միջնակարգ դպրոցի շենքը, տարվա ընթացքում իրականացվել են ևս 43 դպրոցների շենքերի հիմնանորոգման, մասնակի վերանորոգման, ջեռուցման համակարգերի և պատուհանների տեղադրման, ներքին հարդարման աշխատանքներ: ՀՕՖ-ի միջոցներով կառուցվել և շահագործման է հանձնվել Գյումրու Օյունջյան դպրոց-վարժարանին կից «Վարդուհի» արվեստի դպրոցի շենքը:

Դպրոցներին անհրաժեշտ դասագրքերով և ուսումնասօժանդակ միջոցներով ապահովելու նպատակով նախապես իրականացված ուսումնասիրությունների հիման վրա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն ներկայացված ամփոփ հայտի համաձայն ներկրվել, պահեստավորվել և հանրակրթական դպրոցներին է բաշխվել տարրական դասարանների 27 անուն 37693 կտոր դասագիրք, Դասագրքերի շրջանառու հիմնադրամի ծրագրի շրջանակներում ստացվել և բաշխվել է 38 անուն 50751 կտոր դասագիրք, 18 անուն 1419 կտոր ուսուցչի ձեռնարկ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով տպագրված 7 անուն 4960 կտոր դասագիրք:

2014 թվականին միջազգային հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և անհատ բարերարների կողմից որոշակի աջակցություն է ցուցաբերվել մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին դպրոցական գույքի տեսքով, ինչպես նաև կրթական պայմանների բարելավման ուղղությամբ, որի ընդհանուր արժեքը կազմել է 54.082.5 հազ. դրամ, որից՝ 2014 թվականի 1-ին կիսամյակում՝ 42.981.2 հազ. դրամ և 11.101.3 հազ. դրամ՝ 2-րդ կիսամյակում:

Համապատասխան կազմակերպական աշխատանքներ են իրականացվել «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի» (ԴԿՏՀ) ներդրման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ ծրագիրը և «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը» (ԴԿՏՀ) դպրոցներին և սովորողներին հնարավորություն են տալիս ժամանակակից չափանիշներին համապատասխան ընդհանուր դաշտում իրականացնել միջդպրոցական և միջանձնային հաղորդակցություններ, փորձի և ձեռքբերումների փոխանակումներ:

2014 թվականի հոկտեմբեր ամսից մարզի դպրոցներում ստեղծվել են Պատանի երկրապահի հայրենասիրական ակումբներ, որոնք համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության, կրթության և գիտության նախարարությունների և Երկրապահ կամավորական ընկերությունից ՀԿ-ի միջև 09.09.2014թ. կնքված փոխըմբռնման հուշագրի կոչված են հանրակրթական դպրոցներում խթանելու սովորողների հայրենասիրական դաստիարակությունը՝ համատեղ մշակելով և իրականացնելով թեմատիկ տարաբնույթ միջոցառումներ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունները սերտ համագործակցության մեջ են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ: 2014 թվականի հոկտեմբերին մարզի դպրոցներում անցկացվեց Ընդհանուր առաջնությունը դպրոցում խորագրով միջոցառումների մրցույթ, որի մարզային փուլի հաղթող ճանաչված Գյումրու N24 հիմնական և Ջրափիի միջնակարգ դպրոցների սաները դեկտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցեցին մրցույթի հանրապետական փուլին և Ջրափիի միջնակարգ դպրոցի խումբը արժանացավ Ընդհանուր առաջնությանը՝ անվանակարգի հաղթողի կոչմանը: Շարունակելով համագործակցությունը Մայր Աթոռ

Սուրբ Էջմիածնի հետ՝ 2014 թվականի նոյեմբերի կայացավ արդեն ավանդական դարձած Սևարկայական լավագույն ուսուցիչ՝ մրցույթի հանրապետական փուլը, որտեղ Շիրակի մարզի Գյումրու N3 ավագ դպրոցի ներկայացուցիչը ՍՀայոց պատմությունը և Ախուրյանի N2 հիմնական դպրոցի ներկայացուցիչը ՌՖիզիկամ առարկաներից համապատասխանաբար դարձան 1-ին և 3-րդ մրցանակակիրներ:

2014 թվականի հոկտեմբեր ամսին տեղի ունեցան Ուլավագույն տնօրենը, Ուլավագույն ուսուցիչը, Ուլավագույն դաստիարակը՝ հանրապետական մրցույթների հանրապետական փուլերը: Ուլավագույն ուսուցիչը անվանակարգում Շիրակի մարզը ներկայացնող Կառնուտի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի Հայկուհի Հովհաննիսյանը արժանացավ 2014 թվականի լավագույն ուսուցչի կոչմանը և պարգևատրվեց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից:

2014 թվականի հոկտեմբեր ամսին մարզում անցկացվեց Ուլավագույն զինվորական ղեկավարը և Ուլավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը՝ մրցույթների մարզային փուլերը, որոնց հաղթողների մասին անհրաժեշտ տեղեկատվությունը համաձայն մրցույթի անցկացման կարգի ներկայացվեց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

Մարզի պետական հանրակրթական դպրոցները պատշաճ մասնակցություն են ունեցել մարզում անցկացված պետական, ազգային տոներին նվիրված մարզա-մշակութային միջոցառումներին: Համակարգվել և անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել դպրոցականների շրջանում անցկացված սպորտային՝ Ուլաստանի Հանրապետության Ազգային ժողովի գավաթը, Ուլաստանի Հանրապետության դպրոցականների 23-րդ մարզական խաղերը, Ուլաստանի կրթության և գորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերը, ինչպես նաև մշակութային՝ Ուլանակ-22, Ուլայրության և գեղեցկության օրը, Ուլիտելիքի օրը, Ուլաստանի Հանրապետության Անկախության օրը, Ուլիտասարդ նկարիչների միջազգային 3-րդ պլեները և Ուլաստանի միջազգային օրը միջոցառումներին:

Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ մարզային ենթակայության պետական հանրակրթական դպրոցները համապատասխան շրջաբերական- հանձնարարականի համաձայն մշակել են միջոցառումների ծրագրեր և դրանց ժամանակացույցերը ներկայացված են աշխատակազմի կրթության բաժնին:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՀ Շիրակի մարզում պետական մշակութային քաղաքականությունը իրականացվում է Շիրակի մարզպետարանի կողմից՝ տարբեր ենթակայությունների հետևյալ կազմակերպությունների միջոցով. քոլեջների, վարժարանների, 3 նվագախմբերի, 47 մշակութային տների և ակումբների, 13 երգչախմբերի, 1 դրամատիկական թատրոնի, 1 տիկնիկային թատրոնի, 3 գեղարվեստի դպրոցների, գեղարվեստական կրթության ԲՈՒՀ-երի 3 մասնաճյուղերի, 8 թանգարանների, 97 գրադարանների, 28 գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների (11 երաժշտական, 14 արվեստի, 2 գեղարվեստի, 1 պարարվեստի դպրոց), որտեղ սովորում է 3078 աշակերտ, դասավանդում՝ 453 մանկավարժ:

Հիմնակարգվել է մարզային ենթակայության երկու թանգարանների, երկու համերգային կազմակերպությունների և մեկ արվեստի դպրոցի աշխատանքները:

Մարզպետարանի ենթակայության Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան ՊՈԱԿ-ը գիտա-լուսավորչական, մասսայական, կազմակերպչական աշխատանքների գծով ընդունել է 9447 այցելու, տարվել է 492 էքսկուրսիա, կազմակերպվել են տարբեր գեղանկարիչների ստեղծագործությունների ցուցադրությունները (7 ցուցահանդես) և Շիրակի երկրագիտական թանգարանի արշավախումբը շարունակել է իրականացնել հնագիտական պեղումները Երեբունյքի, Մեծ Սեպասարի վաղ բրոնզիդարյան բնակավայրի, Ագատանի և Ջրափիի հնավայրերի, Մախյանի մ.թ.ա. 1-ին հազարամյակի

սկզբների նորահայտ դամբարանադաշտի, Հայկաձորի երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի ամրոց բնակավայրի տարածքներում:

Գյումրու ժող. գործիքների և սիմֆոնիկ պետական նվագախմբերը իրականացրել են իրենց համերգային գործունեությունը:

Գյումրու սիմֆոնիկ պետական նվագախումբը 2014 թվականի ընթացքում տվել է 18 համերգ, Գյումրու ժող. գործիքների պետական նվագախումբը՝ 20 համերգ:

Մարզի գրադարանները շարունակել են իրենց բնականոն գործունեությունը: Շիրակի մարզային գրադարանի գրքային հավաքածուն համալրվել է և սուբսիդային հատկացումների հաշվին կատարվող գնումների (235 կտոր, որից՝ 223 գիրք, 12 պարբերական) և նվիրատվությունների (1951 կտոր) միջոցով, Հունիսի 25-ին Շիրակի մարզի համայնքային գրադարաններին տրամադրելու նպատակով «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մարզային գրադարանին է հանձնվել է 1760 կտոր գիրք:

Մշակվել և ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել Շիրակի մարզի մշակութային կազմակերպությունների 2015-2017 թթ միջնաժամկետ ծախսային ծրագիրը, մարզի տաղանդավոր և շնորհալի երեխաների տվյալների բազան, տեղեկատվություն՝ Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսուցման վարձավճարի փոխհատուցմամբ ազգային, լարային և փողային նվագարանների դասարաններում սովորողների վերաբերյալ:

Հստակեցվել և ՀՀ քաղաքաշինության նախարարություն է ներկայացվել կրթական, մշակութային և մարզական օբյեկտների առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման մասին տեղեկատվություն: ՀՀ մշակույթի նախարարության միջնորդությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն է առաջարկվել Գյումրու «Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ի մասնաձյուղ Ս. Մերկուրովի տուն-թանգարանի հիմնանորոգման (ներառյալ նախագծանախահաշվային) աշխատանքներն ընդգրկել 2014 թվականի Հայաստանի սոցիալական ներդրումների համայնքային ծրագրերում: Քննարկվել և ՀՀ մշակույթի նախարարությանն է ներկայացվել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Շիրակ և Արթիկ թեմերի եկեղեցիները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնելու ենթակա եկեղեցիների ցանկը:

ՀՀ պետական բյուջեից երաժշտական արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման պետական ծրագրի շրջանակներում կազմակերպվել է թվով 19 երաժշտական և արվեստի դպրոցների 377 սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման գործընթացը:

Կազմվել և ՀՀ մշակույթի նախարարություն է ուղարկվել ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից Հովհաննես Շիրազի 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում անցկացվելիք միջոցառումների ծրագիրը:

Համապատասխան ուսումնական հաստատությունները տեղեկացվել են «Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների շրջանառու հիմնադրամ» ծրագրի մասին, ինչի արդյունքում «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամին են ներկայացվել ծրագրի մասնակիցության հայտերը:

«Ոսկե Գավաթ-2014» պարարվեստի Հայաստանի բաց առաջնություն անցկացնելու նպատակով «Յագուար-պրոդակշն» Պրոդյուսերական կենտրոնին են տրամադրվել ՀՀ Շիրակի մարզում գործող պարային խմբերի տվյալները:

ՀՀ Շիրակի մարզպետի որոշմամբ ստեղծվել է ՀՀ Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ:

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են «Բանակի օր», «Մայրության և գեղեցկության տուն», «Շիրակ-Ջավախք մշակութային օր», «Երիտասարդ նկարիչների միջազգային երրորդ Պլեններ»,

<<Շիրակ-Արցախ մշակութային օր>>, <<Ուսանողության միջազգային օր>> և <<Դասական երաժշտության օր>> մշակութային միջոցառումները:

Հունվար ամսին Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում կազմակերպվել և անց է կացվել Հայոց բանակի ստեղծման 22-ամյակին նվիրված մշակութային միջոցառումը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Մարտի 25 - մայիսի 3-ը Շիրակի մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում գործող երգչախմբերը մասնակցել են Կոմիտասի 145-ամյակին նվիրված «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի 7-րդ հանրապետական մրցույթ-փառատոնին:

2014թ ապրիլ-մայիս ամիսներին <<Փյունիկ>> հիմնադրամի աջակցությամբ ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի կողմից Գյումրիում կազմակերպվել և անց է կացվել Երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» մանկապատանեկան 6-րդ մրցույթ-փառատոնը, որին մասնակցել է 33 երկրների 2706 երաժիշտ-կատարող (ՀՀ Շիրակի մարզից մասնակցել են 14 ուսումնական հաստատությունից՝ 170 աշակերտներ):

2014 թ. մայիսի 17-ին «Թանգարանների գիշեր», իսկ մայիսի 18-ին՝ Թանգարանների միջազգային օրվա «Թանգարանները միավորում են մեզ» խորագրով միջոցառումների շրջանակներում Շիրակի մարզի թանգարաններում կազմակերպվել և անց են կացվել տարաբնույթ միջոցառումներ:

Մայիսի 28-ին մարզի խոշոր համայնքներում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված առաջին Հանրապետության տոնին:

Մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում անց են կացվել տարեվերջյան հաշվետու համերգներ, որոնք միտված են եղել գեղարվեստական կրթության որակի գնահատմանը, նոր տաղանդների բացահայտմանը և մրցակցային դաշտի ապահովմանը:

Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող Ամասիայի մանկական արվեստի դպրոց ՊՈԱԿ-ում կազմակերպվել և անց է կացվել դպրոցի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառում:

Հունիսի 15-ին մարզի հանրակրթական և մարզամշակութային հաստատություններն անց են կացրել մի շարք միջոցառումներ՝ նվիրված ՀՀ պետական խորհրդանիշների հանրահռչակման տոնին:

Հունիսի 28-ին Արփենի գյուղում Հայրենիքի զարգացման նախաձեռնություն հիմնադրամի կողմից կազմակերպվել և անց է կացվել <<Տարազի փառատոն>>-ը:

Հունիսի 29-ին կազմակերպվել են <<Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օրվան>> նվիրված միջոցառումներ:

Հուլիսի 1-ին կազմակերպվել և անց է կացվել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորված <<Շիրակ-Ջավախք>> մշակութային միջոցառումը:

Հուլիսի 4-ին անց է կացվել ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված <<Իմ Հայաստան>> համահայկական 2-րդ փառատոնի <<Պարարվեստ>> միջոցառումը, որի մասնակիցները ճանաչողական այցով շրջեցին Հառիճի վանական համալիրի տարածքում, իսկ օգոստոսի 3-ին՝ <<Խմբերգային արվեստ>> միջոցառումը, որի մասնակիցները՝ շրջեցին Մարմաշենի վանական համալիրի տարածքում:

Հուլիսին կազմակերպվել է <<ԲԱՋԵ 2014>> համահայկական երիտասարդական հավաքի Շիրակի մարզային ջոկատի ընտրության փուլը և ապահովվել է մարզային ջոկատի մասնակցությունը հավաքին:

Օգոստոսի 25-30-ը ՀՀ Շիրակի մարզի տարածքում կազմակերպվել և անց է կացվել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորված <<Մինասի գույներով>> խորագիրը կրող <<Երիտասարդ նկարիչների միջազգային երրորդ Պլեներ>> մշակութային միջոցառումը, որը իր շուրջ էր համախմբել թվով 65 երիտասարդ նկարիչներ ՀՀ բոլոր մարզերից, քաղաքամայր Երևանից, ՌԴ Մոսկվա քաղաքից, Բելոռուսի հանրապետությունից, Վրաստանի հանրապետության Թբիլիսի քաղաքից և Ջավախքի շրջանից:

Սեպտեմբերի 5-ին Գյումրու <<Հոկտեմբեր>> կինոթատրոնում <<Ոսկե Ծիրան>> միջազգային կինոփառատոնի շրջանակներում կազմակերպվել է <<Կինոէքսպրես Հայաստան-Վրաստան>> ծրագրի շրջանակներում հերթական միջոցառման անցկացումը:

Սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել է ՀՀ ազգային ժողովի նախագահի հովանու ներքո անցկացված ասամունքի մանկապատանեկան 8-րդ փառատոնի տեղային և մարզային փուլերը:

ՀՀ Շիրակի մարզի Հառիճի վանական համալիրի տարածքում հանրապետությունում առաջին անգամ կազմակերպվել և անց է կացվել հոգևոր երգերի մարզային փառատոն՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի ծննդյան 145-ամյակին: Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ կազմակերպված փառատոնին հոգևոր երգի կատարումներով մասնակցել են Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ, Ախուրյան, Ազատան, Ամասիա համայնքների երաժշտական, արվեստի և հանրակրթական դպրոցների մանկական երգչախմբերը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արթիկի թեմի «Մաղմու» երգչախումբը, ինչպես նաև անհատ կատարողներ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղից /մոտ երեք հարյուր հոգի/:

Մեծ շուքով և բազմաբովանդակ միջոցառումների շարքով նշվել է «Գյումրու օր» տոնակատարությունը:

Անց են կացվել մի շարք միջոցառումներ նվիրված ավանդական տոների, ծեսերի արժևորմանը և տարածմանը, մասնավորապես. «Հացի փառատոնը», «Ազգային ուտեստների փառատոնը», «Արհեստների և արվեստների փառատոնը»:

Շիրակի մարզում հյուրընկալվեց ԼՂՀ Ասկերանի վարչական շրջանի կրթության, մշակույթի և սպորտի ոլորտի 30 հոգանոց պատվիրակությունը: Աշխատանքային հանդիպում-քննարկումներից բացի հյուրերի համար կազմակերպվեց նաև Գյումրու ժող. գործիքների և Սիմֆոնիկ պետական նվագախմբերի համերգ: ԼՂՀ Ասկերանի վարչական շրջանի պատվիրակությունը նաև ներկա գտնվեց ՀՀ Շիրակի մարզի Հառիճի վանական համալիրի տարածքում հանրապետությունում առաջին անգամ անցկացված Կոմիտասի 145-ամյակին նվիրված հոգևոր երգերի մարզային առաջին փառատոնին:

2014 թ. հոկտեմբերի 22-ին Գյումրիում բարերար Օյունջյանների հովանավորությամբ բացվել է «Վարդուհի» արվեստի դպրոցը: Հայաստանում մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար ամերիկաբնակ բարերար Ջոն Հովհաննես Օյունջյանը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

2014 թվականին Շիրակի մարզում գործել են տարբեր գերատեսչական պատկանելիության 42 մարզական կազմակերպություններ՝ 1 քուլեջ, 34 մարզադպրոց, 4 մասնաճյուղ, 2 ակումբ և 1 համայնքային կենտրոն: Մարզական կազմակերպությունները և դրանց մասնաճյուղ-խմբերը գործել են մարզի 3 քաղաքային /Գյումրի, Արթիկ, Մարալիկ/ և 20 գյուղական համայնքներում /Ախուրյան, Ազատան, Հացիկ, Հովիտ, Հայկավան, Քեթի, Մեծ Սարիար, Հովունի, Կամո, Մարմաշեն, Բասեն, Աշոցք, Մեծ Սեպասար, Ղազանչի, Ամասիա, Արեգնադեմ, Շիրակավան, Սառնաղբյուր, Ջիթհանքով, Նոր Կյանք/: Մարզական կազմակերպություններում 28 մարզաձևերից գործել են 836 ուսումնական խմբեր, որոնց հետ աշխատել են 454 մարզիչ-մանկավարժներ: Մարզական կազմակերպությունների տեղաբաշխվածության պատկերը և պարապողների թիվը ըստ մարզի տարածաշրջանների.

Մարզական կազմակերպությունը	Տարածաշրջանները						
	Գյումրի	Արթիկ	Անի	Ախուրյան	Աշոցք	Ամասիա	Ընդամենը
Քուլեջ	1	-	-	-	-	-	1
Մարզադպրոց	26	3	1	3	-	1	34
Ակումբ	2	-	-	-	-	-	2

Հ/կենտրոն	-	-	-	-	1	-	1
Մասնաճյուղ	3	0.2	0.2	0.2	0.2	0.2	4
Ընդամենը	32	3.2	1.2	3.2	1.2	1.2	42
Պարապող	6514	451	280	690	120	140	8195

Մարզում պարբերաբար կազմակերպվել և անց են կացվել տարբեր մարզաձևերի համայնքային և մարզային առաջնություններ, մրցաշարեր, ամառային ու ձմեռային մարզամշակույթային տոնահանդեսներ, հանրապետական մարզական միջոցառումների տարածաշրջանային ու մարզային փուլերի մրցումներ: Մարզի բուժ-հաստատություններում ապահովվել է մարզական կազմակերպությունների սաների բուժ-կանխարգելիչ զննումների կազմակերպման գործընթացը: Ապահովվել է մարզի, համայնքների և մարզական կազմակերպությունների հավաքական թիմերի մասնակցությունը միջմարզային և հանրապետական առաջնություններին ու միջազգային մրցաշարերին: Կառուցվել և շահագործման են հանձնվել՝ Գյումրու ֆուտբոլի ակադեմիան /մասնաշենք, բնական ու արհեստական խոտածածկույթով խաղադաշտեր/, Ամասիայի արհեստական խոտածածկով ֆուտբոլի խաղադաշտը և «Գյումրի» մարզա-առողջարարական հրապարակը: Ընթացքի մեջ են Գյումրու օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջի մարզադահլիճի հիմնակառուցման աշխատանքները: Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են իրականացվել մարզական կազմակերպություններում:

Ձեռքբերումները

«Մրցաշրջան-2014»-ի օլիմպիական խաղերում /ձմեռային և պատանեկան/, տարբեր տարիքային խմբերի աշխարհի և Եվրոպայի առաջնություններում ու միջազգային մրցումներում /Եվրոպայի գավաթի մրցումներ, բանակային մարզիկների աշխարհի առաջնություն, ԱՊՀ երկրների բանակայինների սպարտակիադա, միջազգային „Ա կարգի մրցաշարեր/ 12 մարզաձևերից ՀՀ հավաքական թիմերի կազմերում հանդես են եկել Շիրակի մարզի 128 մարզիկներ, որոնք նվաճել են 58 մեդալ, որից 27՝ ոսկի, 9՝ արծաթ և 22՝ բրոնզե:

հ/հ	Միջոցառման անվանումը	Մասնակիցների թիվ	1-ին տեղ	2-րդ տեղ	3-րդ տեղ	Ընդամենը մրցանակ
1.	Օլիմպիական խաղեր	5	1	-	1	2
2.	Աշխարհի առաջնություններ	31	2	1	6	9
3.	Եվրոպայի առաջնություններ	63	9	6	9	24
4.	Միջազգային մրցումներ	29	15	2	6	23
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		128	27	9	22	58

2014 թվականի հանրապետության լավագույն մարզիկ ճանաչվեց գյումրեցի, հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի և Եվրոպայի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը: Լավագույն տասնյակում ընդգրկվեց նաև մարզի ներկայացուցիչ, ձյուդոյի Եվրոպայի առաջնության ու գավաթի խաղարկության մրցանակակիր Հովհաննես Դավթյանը: Ծանրամարտիկ Հակոբ Մկրտչյանը դարձավ պատանեկան օլիմպիական խաղերի պատմության մեջ Հայաստանի առաջին օլիմպիական չեմպիոնը:

Համահայկական ձևեռային խաղերում մարզկենտրոն Գյումրիի դահուկորդները նվաճեցին 6 մեդալ, որից 2-ը՝ ոսկե և 4-ը՝ բրոնզե: <<Մրցաշրջան-2014>>-ում 22 մարզաձևերից ՀՀ առաջնություններում հանդես եկած Շիրակի մարզի, համայնքների և մարզական կազմակերպությունների հավաքական թիմերը նվաճել են 298 մրցանակ, որից 94-ը՝ 1-ին, 85-ը՝ 2-րդ և 119-ը՝ 3-րդ: Հաշմանդամ մարզիկների հանրապետական 12-րդ մարզական խաղերում՝ ծանրամարտ, բազկամարտ, սեղանի թենիս և լող մարզաձևերից մարզի ներկայացուցիչները նվաճել են 9 մեդալ՝ 3-ական ոսկի, արծաթ և բրոնզ: <<Մրցաշրջան-2014>>-ի հանրապետական մարզական-զանգվածային միջոցառումներում և ստուգատեսներում Շիրակի մարզի կազմակերպությունները, թիմերը և ներկայացուցիչները նվաճել են 20 մրցանակ, որից 4՝ 1-ին, 9՝ 2-րդ և 7՝ 3-րդ: ՀՀ Նախագահի մրցանակների համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի հաղթող և մրցանակակիր դարձան Գեղամյանների և Ալեքսանյանների թիմ-ընտանիքները, իսկ <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> և <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> ստուգատեսներում համապատասխանաբար հաղթող ու մրցանակակիր դարձան Գյումրի և Ամասիա համայնքները:

ՀՀ Շիրակի մարզպետի անմիջական միջնորդությամբ ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել աշխարհի, Եվրոպայի առաջնություններին ու միջազգային մրցաշարերին Շիրակի մարզը ներկայացնող մարզիկներին ու մարզիչներին: Մարզպետարանում կազմակերպվել են հանդիպումներ <<Մրցաշրջան - 2014>>-ում մարզական ակնառու նվաճումների հասած մարզիկների ու նրանց մարզիչների հետ: Չեմպիոններն ու նրանց մարզիչները ՀՀ Շիրակի մարզպետի կողմից պարգևատրել են դրամական մրցանակներով և հուշանվերներով:

Համապատասխան աջակցություն է ցուցաբերվել հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով զբաղվող կազմակերպություններին՝ տեղերում մարզական միջոցառումներ կազմակերպելու, մասնակիցների տեղափոխման խնդիրները հոգալու և հաշմանդամների հանրապետական մարզական խաղերին մասնակցելու համար:

Մարզական-զանգվածային միջոցառումների հանրապետական եզրափակիչ փուլերին մասնակցող Շիրակի մարզի բոլոր հավաքական թիմերը ապահովվել են համապատասխան մարզահագուստներով:

Տարեվերջին ՀՀ Շիրակի մարզպետը հանդիպել է օլիմպիական խաղերում, տարբեր տարիքային խմբերի աշխարհի և Եվրոպայի առաջնություններում ու միջազգային մրցումներում հաղթող ու մրցանակակիր դարձած մարզի 30 մարզիկների և նրանց մարզիչների հետ: Նրանց մարզպետի կողմից նվիրաբերվել են հուշանվերներ և մարզական հագուստ: